

ՊԱՏՄԵԼԸ
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ



372.21
Պ-30

ՅԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

1940

ԶԱՅՈՒԹ
ԱՊՐԵԼԻ ՎՐԱՅԻ



372-21

Թ-30

Կ.

0720-10

ՊԱՏՄԵԼԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

(Թարգմանություն ռուսերենից)

Բնագիրք հաստատված և ՌԽՖՍՀ Լուսժողկոմատի կողմից



Հ Ա Յ Պ Ե Տ Հ Շ Պ Ա Տ
Յ Ե Բ Ե Վ Ա Ն 1940

18 JUL 2013

50. 963

I ՊԱՏՄԵԼԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

Գեղարվեստական դաստիարակությունը մեծ նշանակություն
ունի նախադպրոցական աշխատանքի բնագավառում։ Նախա-
դպրոցական հասակը յուրահատուկ հասակ է։ Զոր ու ցածրաք,
անհետաքրքրական ձևով յերեխային տրվող նյութը, ինչպես ո-
քինակ՝ պատկերներից ու կենդանի որինակներից զուրկ ձանձրա-
լի զրույցը, մտքի թմրություն, հոգնածություն ե պատճառում
յերեխային և բացասական վերաբերմունք առաջացնում նրա մեջ
գեղի զրույցը։ Բնդհակառակը, հուզական բարձր տրամադրու-
թյան, շահագրգուվածության պայմաններում բարձրանում ե
յերեխայի կենսական լարվածությունը, արագանում ե մտա-
ծողությունը, յերեակայության աշխատանքը, ավելի վառ ու
ցայտուն ե արտահայտվում ստեղծագործությունը և այլն։
Դաստիարակը պետք ե յերեխային կոնկրետ գրավիչ նյութ տա՝
աշխատելով յերեխայի մեջ ստեղծել հուզական տրամադրու-
թյուն և կենդանի հետաքրքրություն։

Այդ պատճառով յերեխաների հետաքրքրությունն ապահո-
վող մեթոդների հարցը չափազանց կարևոր նշանակություն ե
ստանում։

Դաստիարակը, ողտագործելով գեղարվեստական նյութը
մանկապարտեզում, իհարկե, չպետք ե թույլ տա, վոր յերեխա-
ները ծանրաբեռնվեն, չափից ավելի հուզվեն։

Դա պակաս լնասակար չե, քան ձանձրույթից առաջացած
հոգնածությունը, վորովհետև գերհոգնածություն ե պատճառում
ամրող նյարդային ապարատին և տեղիք տալիս ավելորդ հուզ-
վածությունից խիստ կերպով թմրածության անցնելու։ Դաստի-
արակը, ճանաչելով յերեխային, այնպիսի նյութ պետք ե ընտ-
րի և այնպես տա այն, վոր յերեխան կարողանա առանց ուժե-
րի ավելորդ ու լնասակար լարման հաղթահարել նրա հետ
կապված դժվարությունները։ Այս կերպ միայն դաստիարակը
ուկտիվ կերպով կնալասափ յերեխայի զարդացմանը։



1876
40

Рассказывание в детсаду

Ги . Арм. ССР, Ереван, 1940

Գեղարվեստը, վորը տալիս ենք յերեխային նկարի, քանդակի, գեղարվեստական գրականության, պատմելու, յերդի, տիկնիկային ու սավերային թատրոնի, գեղարվեստական ռազմակազմական միջոցով, ամենամեծ ուշագրությամբ ու խնամքով պետք ե ողտագործվի մանկապարտեզում:

Իրականում գեղարվեստի վո'չ բոլոր տեսակներն են ողտագործում և վո'չ բավարար չափով. գեղարվեստական աշխատանքի վորակը ևս հաճախ անբավարար է լինում:

Պատմումը մանկապարտեզում յերեխայի. գեղարվեստական պատիարակության ամենաարդյունավետ ու վորձված միջոցներից մեկն և, սակայն, չնայած դրան, նա ներկայումս նախաղլուցոցական աշխատանքի մոռացված ընադավառներից է:

Մենք պատմելու համար բավական էրականություն ունենք, սակայն, չնայած դրան, մեր մանկապարտեզները վերջին տարիներս թուլացրել են այդ աշխատանքը, իսկ վորոշ մանկապարտեզներ ուղղակի դադարել են ողտագործել պատմումը: «Ավելի հեշտ ե բնագիրը կարգալ, քան նրա բովանդակությունը պատճել. պատմելու համար պետք ե նախապատրաստվել, սակայն ժամանակ չկա», — պատճառաբանում են վորոշ դաստիարակներ: Դիմագրության ամենաթույլ գծով դնալու այդ տենդենցը պետք է վորքան կարելի յե շուտ կասեցնել:

Պատմելը մանկապարտեզում պետք ե սոմենորյա աշխատանքի մեթոդ դառնա և յերեխաների. համար մեծ ուրախության առարկա ու նրանց վրա խորապես ազդելու միջոց հանդիսանա: Պատմելը յերեխային հասկանալի յե դարձնում գեղարվեստական դրականությունը, նպաստում ե յերեխայի խոսքի զարդացմանը և իրեն իսկ՝ մանկապարժի խոսքի կուտարային:

Պատմելը ունի մանկապարժական խոշոր հնարավորություններ՝ պետք ե վարպետորեն ողտագործել այդ հնարավորությունները:

Կ՞Ե՞ և պատմելը

Պատմելն արվեստի հնագույն տեսակներից է: Գրերի գյուտից դեռ շատ առաջ պատմելը սիրված ու տարածված ժողովրդական արվեստ եր: Հունական պատմողները, յերդիչները, միջնադարյան արվածությունները, արտադրությունները, մեր ժողովրդա-

դան զուսանները — դրանք բոլորն ել ցանկալի հյուրեր ելին ինչպես մասսայական ժողովրդական տօնախմբություններին, նույնպես և ասպետական ամբողջներում ու թագավորական պալատներում: Պատմողները լուսական պատերազմի դաշտում, մրցություններին, մենամարտություններին: Նրանք, ականատես լինելով բազմաթիվ ու բարձապիս անցքերի, յերդեր ու պատմություններ ելին հորինում նրանց մասին. նրանք գովերդում ելին հերոսներին, նըրանց սիրազարծությունները, զանազան անցքեր՝ յուրատեսակ յուսարաննելով ու գունավորելով փաստերը: Նրանք սովորաբար յերդում ու պարում ելին ժողովրդական պարզ լարային գործիքների նվազակցությամբ: Նման պատմվածքների դաստիարակչական աղղեցությունը ժողովրդական մասսաների վրա չափազանց մեծ էր:

Պատմելը կենդանի գեղարվեստական խոսքի մի տեսակն է: Պատմելն արվեստ և և՛ իր նյութի, և՛ տալու մեթոդի տեսակետից:

Պատմողն ստեղծագործում է հանպատրաստից, տալիս ե իր պատրաստի ստեղծագործությունը, թե գեղարվեստական յերկի բովանդակությունն իր վերամշակումով — այդ միենույն ենյութն ինքը պետք ե ունենա գեղարվեստական արժեք, պետք է առ վառ պատկերներ, պետք ե հուզի ունկնդիրներին և ունենա ամբողջական, ալարտված կառուցվածք: Գեղարվեստական պատմումը բացահայտում, հասկանալի յե դարձնում գեղարվեստական յերկն ունկնդիրների համար:

Գեղարվեստական ընթերցումը, վորպես արվեստի տեսակ, մոռ և պատմելուն: Սակայն պատմելու յուրահատկությունն ու առավելությունն ընթերցման համեմատությամբ միանդամայն ակներեն է: Պատմելու ժամանակ բացակայում և հեղինակը՝ պատմողը պատմությունը հաղորդում և վորպես ականատես, և ունկնդիրները լսում են նրան վորպես հեղինակի, վորպես պատմվածքի մեջ նկարադրված իրադարձությունների կենդանի վկայի, ականատեսի: Պատմելու միջոցով ըմբռնումը տեղի յե ունենում ավելի անմիջականորեն: Բացի այդ, պատմողը, և տարբերություն ընթերցողի, վորի հայցքն ու գեմքն ուղղված ե լինում զեպի զիրքը, իր ունկնդիրների հետ զանյում և ավելի սերտ, ավելի անմիջական կոնտակ-

տի մեջ։ Պատմողը, վոր գեմքով դարձած է լինում գեղի առւդիտորիան, ամբողջ ժամանակ տեսնում է իր ուկնդիրներին, զդայուն կերպով նկատում ու հաշվի յև առնում նրանց ռեակցիաները՝ հենց պատմելու ընթացքում կարող է փոխել ինչպես նյութի բովանդակությունը, այնպես ել պատմելու պրիորները։ Պատմողի և ունկնդիրների միջև կոնտակտն այնքան ուժեղ է լինում, վոր ստացվում է նրանց համատեղ ստեղծագործման մի պրոցես։ Նկատելով անդամ յերեխաների անխոս արտահայտած ռեակցիաները, զգայուն պատմողը տեսնում ու հասկանում է, թե առողջառիան ինչպես է ընդունում իր պատմածը, թե իր պատմության մեջ ի՞նչը պետք է ընդդեմ կամ բացարել, ի՞նչը բաց թողնել, մեղմացնել կամ ուժեղացնել և այլն։

Դա կատարվում է նաև այն գեղքում, յերբ պատմվածքի բովանդակությունն ու լեզուն փոփոխության չեն յենթարկվում։

Կարդալիս այդպիսի դրություն չի կարող լինել։ Կարդացողը մինչ կարդալը կարող է նյութի բովանդակության մեջ վորոշ փոփոխություն մտցնել, հաշվի առնելով առողջառիան, բայց վոչ կարդալու ընթացքում։ Կարդացողը քիչ և նայում յերեխաներին և չի կարող նույնչափ զգայուն լինել գեղի իր ունկնդիրները, ինչպես պատմողը։

Ունկնդիրներն իրենց ավելի մոտ են զգում պատմողին. սրա պատմելը, թեկուզ բեմից, բազմամարդ առողջառիայի համար, միշտ հնչում է ավելի ինտիմ ու պարզ խորապես հոգելով ունկնդիրներին իր պարզությամբ ու մոտիկությամբ, հարազատությամբ։

Խոսելով կարդալու համեմատությամբ պատմելու ունեցած առավելությունների մասին, պետք է ընդդեմ նաև նրա ռեակտուարային անսպաս հնարավորություններ ունենալու հանդամքը։ Պատմողը պատմում է վոչ միայն պատրաստի գեղարվեստական յերեխաների բովանդակությունը, այլև ինքն է դանազան պատմվածքներ Գորինում՝ ողափորձելով իր անձնական հիշողությունները, թերթերի հաղորդումները, Փելետոնները, ժամանակակից ցայտուն դեպքերի մասին յեղած պատմությունները*). պատմողն իր ստեղծագործությամբ արձադանքում է յերեխաների ընթացիկ, առորյա հետաքրքրությանը։

*) Տես «Պատմողի ստեղծագործությունը» գլուխը։

Գիրքը չի կարող հասնել որվա գեղքերի հետեւից, յերեխաները մեծ հետաքրքրություն են ցույց տալիս գեղի ամեն մի աչքի ընկնող փաստ, նրանք ուշիւշով հետևում են այն ամենին, ինչի մասին հուզմունքով խոսում են մեծերը։ Յերեխաները դաստիարակից պահանջում են պատմել իրենց այդ ամենի մասին, և զատարարակը պետք է կատարի նրանց ցանկությունը։

Դաստիարակի հորինած պատմվածքներից չի կարելի գեղարվեստական մեծ վարպետություն ակնկալել, սակայն նրանք պետք է հուզեն իրեն իսկ՝ պատմողին, լինեն պատկերավոր և աչքի ընկնեն իրենց բովանդակության ու կառուցվածքի պարզությամբ։ Նման անկեղծ, բովանդակալի, գեղարվեստականության տարրեր պարունակող պատմվածքները կըրավեն յերեխաներին և դրական ազդեցություն կունենան նրանց վրա։ Նման՝ յերեխաներին խորապես հետաքրքրող պատմվածքներից ելին «Կրասին» սառցահատի և չելյուսկինցիների մասին պատմվածքները, վոր հորինում ելին իրենք մանկավարժներն անխոտիր բոլոր մանկապարտեզներում։ Յերեխաներն ադահորեն կլանում ելին ամեն մի խոսք, ամեն մի փաստ և ամեն որ անհամբերությամբ հարցում ելին՝ ինչպես են չելյուսկինցիները, արդյոք հեռագիր չկա։

Յերեխաները հետաքրքրությամբ լսում են դաստիարակի հիշություններն իր մանկության մասին։ Այս կարգի պատմը վածքները, յեթե նրանք տրվում են հետաքրքրական ձևով, տակտով ու չափի զգացումով, առանց բարոյախոսության՝ դաստիարակի և յերեխաների մեջ ստեղծում են մոտիկություն, մտերմություն։ Հաճախ իրեն մանկապարտեզում պատմելու նյութանշամբեշտարար ովտագործվում են պատանիների համար գըրված նյութերը, իհարկե, համապատասխան վերամշակումով։ Այլ գրվածքները հաճախ շատ արժեքավոր ու հետաքրքրական են լինում նախաղպրոցական հասակի յերեխաների համար, սակայն միաժամանակ ավելի յերկար են լինում և այդ հասակի յերեխաների համար անմատչելի տեղեր են պարունակում, վորովիսիք պետք և մեծ զգուշությամբ կրծտել կամ փոփոխել և այդպիսիսով հարմարեցնել նախաղպրոցականի պահանջներին։

Այսպիսով, պատմելու համար նյութերը չափազանց բազմազան են ու հարուստ։ նրանք, ովտագործվելով, ընդարձակում

հն յերեխաների մտահորիզոնը և բավարարում նրանց բազմապի-
սի պահանջները:

Վերջերս պատմողների միջև վեճեր են ծագում պատմելու
մեջ դրամատիզացիայի սահմանների և պատմելու իլյուստրատիվ
մեթոդների մասին: Առաջին հայցքից թվում է, թե այդ վեճե-
րը վերաբերում են պատմելու տեխնիկային ու մեթոդիկային,
ռակայն, իրավես նրանք շոշափում են պատմելու բուն եյությու-
նը և դրամատիզացիայից ու արվեստի այլ տեսակներից, նրա
ունեցած տարբերությունը վերաբերող հարցերը: Այդ վեճերի
նկատմամբ ճիշտ կողմնորոշում ստանալու համար պետք է հաշ-
վի առնել յերկու մոմենտ՝ 1) պատմելու, իբրև արվեստի տառն-
ձին տեսակի, առանձնահատկությունը և 2) ըմբռնման տարիքա-
յին առանձնահատկությունները:

Պատմելու առանձնահատկության հարցը փորոշելիս մենք
չահագրգոված ենք, վոր մի կողմից չափազանց չնեղացնենք
պատմելու արվեստի սահմանները, հաշվի առնենք նրա կիրառ-
ման լայն հնարավորությունները, նրա բազմատեսակությունը,
մյուս կողմից՝ հասկանանք պատմելու առանձնահատկությունը,
փորպեսզի թե՛ գործնական, թե՛ տեսական բնույթի պահանջ-
ներ մշակելու համար անհաժեշտ դիրքավորում ունենանք:
Մեր կարծիքով չափաղանց գնասակար են այն փորձերը, փորոնց
նպատակն ե վերացնել պատմելու առանձնահատկությունը,
պատմելը միաձուել արվեստի մյուս տեսակների հետ կամ թե
այն դարձնել սոսկ ոժանդակ մեթոդ և ոդտագործել միայն նը-
կարներ, մակետներ, ներկայացումներ, կինոնկարներ ցույց տա-
լիս և այլն:

Պատմելն արվեստի ինքնուրույն և կարենը տեսակներից մե-
կըն ե: Պատմելը պետք է ունենա իր մեթոդները, իր տեխնիկան
և պետք է պահպանի այդպիսիք և՝ այն գեղգերում, յերբ պատմե-
լը հանդես ե դալիս առանձին, իբրև արվեստի ինքնուրույն մի
տեսակ, և՝ այն ժամանակ, յերբ նա միանում է (սակայն չի
միաձուլվում) արվեստի մյուս տեսակների հետ:

Պատմելու մեջ ավելորդ դրամատիզացիա մտցնելու դեմ
յեղած բողոքը միանդամայն որինական է, վորովհետեւ հակառակ
գեղգում պատմելը կորցնում է իր դեմքը և վեր և ածվում
դրամատիկական արվեստի: Վերջինս ոգտագործում է դեղար-
վեստական յերկերի վորոշ տեսակը (դրամատիկականը), և նրա

արդահայտման մեթոդը յուրահատուկ է: Դրամատիկական ար-
վեստը ցուցադրում է և վոչ թե պատմում: Դրամատիկական ար-
վեստի հիմքում դրված է դիտման մոմենտը, իսկ պատմելու
հիմքում՝ ուկնդրումը: Դրամատիկական արվեստում յուրաքանչ-
յուր դերասան միայն մեկ, իր գերն և խաղում. ըստ վորում՝
նրան ոժանդակում է նկարիչ—դեկորատորը՝ պատկերելով շրջա-
դրությունը, նրան ողնում է դերասանների ամբողջ կոլեկտիվը՝
պիեսում խաղալով զանազան դերեր, նրան ողնում և ոեժիսյու-
րը, վորը կառուցում է ամբողջ բեմագրությունը, բեմական ար-
վեստի բոլոր տարրերը կապում ե միմյանց հետ և ստեղծում մի
միասնական ամբողջությունը: Նման ողնությունից զուրկ ե պատ-
մողը: Նա մենամենակ աշխատում է բոլորի փոխարեն՝ և՛ ոեժի-
այորի, և՛ նկարիչ-դեկորատորի, և՛ բոլոր դերասանների (բոլոր
գործող անձերի), իսկ յերեմն՝ նաև հեղինակի փոխարեն: Սրա-
նով ել վորոշվում է պատմողի վարքագիծը, նրա դիրքը վորպես
հիմնականում մի բան պատմող, վորը վոչինչ չի ցուցադրում,
բայց ամեն բան պատմում է և, պատմելով աղջում և լողիների
յերեակայության վրա, ստիլում և նրանց իրենց յերեակայու-
թյան ուժով վերաբռնակը պատմվածքի մեջ յեղած դեմքերը,
պատկերներն ու անցքերը և մի տեսակ տեսնել այդ ամենը:
Պատմվածքի «տեսանելիությունը» լավ պատմելու հիմնական
հատկություններից մեկն է: Ունկնդիրների աչքերի առջև կար-
ծես կինոժապավեն և անցնում:

Ի՞նչ ե տեղի ունենում, յերբ պատմողը փորձում է հանդես
գալ վորպես պատմվածքի հերոսի դերակատար, խաղալ հերոսի
դերը: Անմիջապես արտահայտվում է դրության կեղծությունն
ու անբնականությունը՝ հանկարծ հերոսը հանդես և գալիս կեն-
տանի մարզու կերպարանքով, յերեխաների յերեակայության
թելը կտրվում է, նրանց ուշադրության կենտրոնը փոխադրվում
է դեպի տեսողական մոմենտը: Սակայն ցավալին այն է, վոր
պատմողը զործող հերոսի դերում յերկար մնալ չի կարող, վո-
րովհետեւ նա պետք է տա և՛ դեկորացիան, և՛ խոսի զործողու-
թյան մասին: Պատմելն ունի իր գրական ձևը, իր ժամանքը: Պատ-
մողը խաղալով հերոսի դերը, պետք է նույն ձեռվ տա նաև
պատմվածքի մյուս զործող անձերին. սա Փիզիկապես անհնար և՝
մի մարդ չի կարող միաժամանակ մի շաբթ դերեր խաղալ: Ար-
դյունքը լինում է այն, վոր ստացվում է կցկոուր, հակագեղար-

վեստական կիսաներկայացում—կիսապատմում։ Կորչում և նյութի ամբողջականությունը, գեղարվեստականությունը։ Ահա թե ինչու պատմելը չի կարելի դարձնել ներկայացում, խաղ և զատմելիս ողտագործել թատերական մեթօդները։ Ամբողջական գեղարվեստական պատմություն տալու, դործող անձերին դործողության մեջ պատկերելու համար պատմողը պետք է իր հերթաներից բավական հեռու գտնիլի, պետք և վորոշ հեռավորության վրա տեսնի ու ընդգրկի նրանց՝ իր տեսադաշտում ունենալով պատմվածքի վողջ հետանկարը։ Պատմողը պետք է պատմի, իր նյութը տալով գունդ, արտահայտիչ, վորպես հուղված ականատես, առանց ճգնելու իր հույսերը լսողների վղին փաթաթել և, միաժամանակ, առանց ծածկելու իր վերաբերմունքը դեպի հերոսներն ու անցքերը։

Ահա պատմելու արվեստը, նրա հարաբերությունը դեպի դըրամատիկական արվեստը, դիտողական մոմենտները։ Ինչպէս կարելի յե պատմելը դարձնել արտահայտիչ։ Արդյոք ամեն տեսակի դըրամատիզացիս փոխադրվում է դերասանական խաղի։ Իհարկե՛ վոչ։ Արտահայտչությունը, հուզականությունը լավ պատմելու^{*)} անբաժանելի հատկանիշներ են, սակայն այդ արտահայտչությունը պայմանական է՝ պատմողի ձայնի յելեվեծները, թեթև շարժումները, ժեստերը, միմիկան— այս բոլորը պետք է լսողի յերեակայության մեջ ստեղծեն կենդանի պատերներ։

Որինակ, պատմելով «Յերեք արջուկներ» հեքիաթը, չպետք է տալ արջերի շարժումները, նրանց մոնչոցը լրիվ ձայնով. բավական է տալ միայն նրանց ձայների տարրերությունը համեմատական չափով, մանավանդ վոր հեքիաթը ինքն ել և թելադրում այդ պայմանականությունը, «Յեկ մոնչաց նա» (Հայր արջը) բարձր ձայնով. «Այս ս՞վ ե կերել իմ ամանից . . .» և այլն, «Յեկ մոնչաց նա» (մայր արջը) վոչ չափ բարձր. «Այս ս՞վ ե կերել իմ ամանից . . .» և այլն։ Այս մեկնարանությունները պատմողին աղատում են խաղալու պարտականությունից և թույլ են տալիս ձայնի յելեվեծներից ոգտվել վոչ մեծ չափով։

Պատմողի տոնն ու ձայնի յելեվեծները միշտ պարունակում են իրենց մեջ յերկու մոմենտ՝ գրանցից մեկը արտահայտում է

*) Տես «Պատմելու տեխնիկան» դուռիք։

պատմողի վերաբերմունքը դեպի հերոսը, նրա տեսակետը դեպի տեղի ունեցող իրադարձությունները, մյուսը՝ հերոսի նկարագրությունն ե։ Այդ պատճառով պատմողը չի կարող տալ բոլոր դործող անձերի լրիվ ու ամբողջական պատմկերը։

Հաղորդման պայմանականությունը կարող է լինել հոգեբանութիւններին պարզ և բարդ։ Բարդության աստիճանը պայմանավորվում է և՛ նյութով (որինակ, ժողովրդական հեքիաթները պահանջում են հաղորդման պարզ պայմանականություն), և՛ առույթառըշիայով, և՛ պատմողի անհատականությամբ։

Մանկավարեկում նույթի հաղորդման պայմանականության աստիճանը կախված է յերեխաների տարիքից ու պատմվածքից բնույթից։ Այս կապակցությամբ կարեսը և միայն ընդգծել, վոր պատմողը պետք է չկորցնի չափի գիտակցությունը, վորովհետեւ ավելորդ պայմանականությունը կարող է խանդարել պատմվածքի ըմբռնմանը։

Մանկավարժ-պատմողները յերեմն մանկական մեծ առողիտորիայի առաջ հանդես են դալիս բեմից։ Նման դեպքերում նրանք պետք է իրենց պատմելուն արտաքին ավելի արտահայտչություն տան, ավելի դրամատիկ դարձնեն, ձայնական միջոցներն ավելի մեծ չափով ողտագործեն, սակայն այդ քանակական աճը (տոնի, ձայնի յելեվեծների, ժեստի) չպետք է փոխի պատմելու ընդհանուր բնույթը, չպետք և վերածվի խաղի, ներկայացման։

Ահա թե վորն է պատմելու եյությունը, նրա առանձնահատկությունը. ահա թե ինչպես պետք է հասկանալ գրամատիզմի մոմենտները պատմելու մեջ։

Յերկրորդ և վոչ պակաս սուր վեճերի հարցը—դա պատմելու բնթացքում բազմապիսի իլյուստրատիվ մեթոդների ոգտագործման խնդիրն է։ Այս հարցը լուծելիս չպետք է մոռանանք վոչ միայն պատմելու եյությունը, այլև այն յերեխաների տարիքը, վորոնց համար ողտագործվում են իլյուստրատիվ պատմելու գանազան ձեւերը (նկարներ, թղթե թատրոն, յերեխաների իրենց խաղը (ինսցենիբովկան) և այլն։

Վարչ մանկավարժներ առաջարկում են ամեն հասկի յերեխաների համար պատմելն անցկացնել զանազան իլյուստրացիաներով, ըստ վորում, գործե վերապահում չեն կատարում նաև յերդի բնույթի նկատմամբ։ Մենք գիտենք, վոր ալոսկոպը, մա-

գական լապտերը, սակերային ու թղթե թատրոնները, վոր շատ հետաքրքրական զբաղմունք են յերեխաների համար, իսկապէս ընթացակցվում են զբույցով: Վոչ վոք չի բողոքի՝ նկարը (անշարժ կամ շարժուն) ցուցադրելու ժամանակ պատմելն իրեն ոժանդակ միջոց ոգտագործելու դեմ: Պատմելը կնդաստի նկարն ավելի լավ հասկանալուն: Պատմելու նման ոժանդակ ոգտագործումը հարկավոր է բոլոր հասակների համար: Սակայն չի կարելի պատմելը զրկել իր ինքնուրույն մեծ նշանակությունից, յերբ ուշադրության կենտրոնում ե վոչ թե նկարը, թատրոնը, այլ ինքը պատմվածքը, յերբ հարկավոր չեն իլյուստրատիվ նյութերը: Իսկական լիարժեք պատմվածքը, վորը չի ցրում լուսպին դիտելու նորատակով ցուցադրված վորեն որյեկտով, հանդիսանում է պատմելու հիմնական ձևը:

Ի՞նչ չափով և վո՞ր հասակի յերեխաների համար նորատակաշարժարմար և պատմելուն միացնել իլյուստրացիան:

Կըտակը հասակի (2-3 տարեկան) յերեխայի մտածողության հիմքը հանդիսանում է անմիջական տպագորությունը. այդ հասակում յերեխան մտածում ե նրա մասին, ինչ իր աչքի առաջն ե, նա քիչ ե հիշում բացակայող առարկաները: Այդ պատճառով 2-3 տարեկան յերեխաներին վորեն բան պատմելիս պետք է ոգտագործել դիտողական նյութերը (նկարներով պատմելը, աը-վյալ զրքի մասին պատմելը և այլն): Մոտորա-շոշափողական ռեակցիաներ, խաղի տարրեր պարունակող պատմվածքներն ուրախացնում են փոքրիկներին, իսկ կատակ պարունակովները՝ զբաղեցնում են նրանց և դուր դալիս: Խաղի բնույթ ունեցող վոտանավորները, յերգերը (ինչպես՝ «Աքաղաղ, աքաղաղ, վոսին կատարիդ մտաղ...») յերեխաներին հաճույք են պատճառում, նրանով, վոր պատմողը լսողի անունը մտցնում է պատճվածքի մեջ («Աքմիկին արթնացրիր»): Պատճվածքը խաղի միջոցով այս կերպ մոտեցնելը յերեխային (վորը զենևս դիմերենցիալ ըմբռնություն չունի) հարկավոր ե. սա ոզնում է յերեխային, վոր հետապայում նա անցնի խաղի առարեր և նկարչապունակող պատմություններ լսելուն:

Հայտնի յե վոր փոքրիկներն իրենց մոտ ծանոթ տառարկաների մասին (որք կատակի, չնկիկի) պատմվածքները լուսմ են և առանց իլյուստրացիայի: Սա վկայում է յերեխայի առաջադիմության մասին, այս մասին, վոր յերեխան անցնում է հիշու-

զությամբ մտածելուն, վոր նրա յերեխակայությունն աշխատում է, վոր նա կարող է վորով վերացում կատարել ուղղակի, կոնկրետ իրականությունից: Յերեխայի զարգացման այս նոր հտապը, նոր ընդունակությունը պետք է ամեն կերպ ամրապնդել: Իսկ յեթե փոքրիկներին մենք շարունակ իլյուստրատիվ նյութերով պատմություններ տանք, դրանով կդանդաղեցնենք նրանց մըտածողության զարգացումը: Նախաղպրոցական կրտսեր հասակի յերեխաներին իլյուստրացիայով պատմվածքը տալով, միաժամանակ պետք է քննադատական վերաբերմունք ունենալ զեղի պատմողի իլյուստրատիվ մեթոդները: Վո՞չ ամեն մեթոդ և լավ Այսպես, մանկավարժորեն սխալպիտի համարել Բրաուն Գերբոյի հանձնարարությունը, ըստ վորի, պատմելուն զուղընթաց, փոքրերին առաջարկում է ներկայացնել պատմվածքի բովանդակությունը, այլ կերպ ասած, յերեխաների ուշադրությունը բաժանվում է յերկուսի՝ լսելու և գործելու, մի խնդիր, վորը վեր է յերեխաների ուժերից: Այս դեպքում յերեխաները մանկավարժի թելագրանքով կզործեն իբրև խաղատիկների՝ մոռանալով, թե ով, յերբ և ինչ պետք է կատարի, կամ թե՝ տարվելով գործողությամբ, կդաղարեն ունկնդրել պատմողին: Պարզ է, վոր այս մեթոդը հանձնարարել չի կարելի:

Առավել ևս կասկածելի յե, թե վորքան նպատակահարմար է ավելի մեծահասակ յերեխաների համար պատմելիս ողտագործել իլյուստրացիան: Վախ և առաջանում, թե պատմելու պրոցեսում ցուցադրումն արդյոք չի՞ խախտում պատկերացման ամբողջականությունը, չի՞ խանդարում բառապատկերին, վորն ունի իր առանձին հնչականությունը, իր ութմը: Ի՞նչ և մնում «Բոքոնիկ» հրաշալի յերաժշտական հեքիաթից, յերբ այն իլյուստրացիայի յե յենթարկվում կարտած ու լարի վրա շարած պատկերների միջոցով: Ինչո՞ւ յե այդ արվում: Գլորվող բոքոնիկի պատկերն միթե կարող է համապատասխանել փոքր արկդի վրա կատարվող գործողությունը՝ ինքնաշեն մեխանիզմի և կենդանիների կոնտուրային կերպարանների միջոցով: Յել առաջարակ ինչո՞ւ նվազեցնել ունկնդրելու կուլտուրան, ունկնդրում, վորի ժամանակ ամենատարժեքավոր պատկերը յերեխայությամբ տեսնելու կարողությունն է: Նկարի, մակետի և այլ որյեկտների զուղընթաց, ցուցադրումը մանկան մտածողությունը զրկում

Ե այդ հնարավորությունից : Վերջապես կասկած և առաջացնում նաև հանձնարարվող մեթոդների գեղարվեստական վորակի խընդիրը : Այն ժամանակ, յերբ մենք պայքար ենք մղում հանուն խկական գեղարվեստական կուլտուրայի մանկապարտեզում, հանուն արվեստի մեծ վարպետների դուռերի, Բրաուն Գերբոն առաջարկում եպատրաստել ինքնաշեն մակետներ, թղթե թատրոններ՝ լարի վրա շարած ֆիգուրներով, բամբակի ճուտեր, ինքնաշեն գրքեր և այլն : Մի՞թե դեռևս պարզ չե, վոր չի կարելի շարքային դաստիարակին, վորը բոլորովին զուրկ և ձեռարվեստի ունակություններից, հանձնարարել յերեխաների համար պատրաստել մակետներ, թատրոններ, գրքեր և այլն : Երեխաների դիման համար անհրաժեշտ արտադրանքի գեղարվեստական վորակի նկատմամբ յեղած պահանջների նման իջեցումն անթույլարելի յէ, հատկապես այժմ, յերբ այդ ուղղությամբ փորոշ նվաճում արդեն կատարված և և մանկապարտեզի եսթետիկական գեմքը բավական բարելավվել եւ :

Մեր կարծիքով նշված մեթոդների հիմնական թերությունները բացատրվում են հեղինակի արմատական սխալով, այն եւ պատմելու, իբրև ինքնուրույն, իր ներդորժման առանձնահատուկ միջոցներն ունեցող արվեստի՝ թերազնահատմամբ : Այդ թերազնահատման հետևանքը լինում է արև, վոր արվեստի առարեր տեսակները շփոթվում են և մեկը մյուսով փոխարինվում, փոխանակ նրանց միջև ճիշտ փոխազդեցություն ստեղծելու : Միայն պատմելու առանձնահատկության ճիշտ ըմբռնումն ու գնահատումը կարող են աղատել մեզ վերոհիշյալ սխալներից :

Միանդամայն հնարավոր համարելով պատմելու ոգտագործումը փորպես ոժանդակ միջոց ալոսկոպի, ստիերային ու թղթե թատրոնների, մողական լապտերի հետ և այն, միաժամանակ պետք ել ընդգծենք, վոր նման գեղքերում դիմավորը պատմելը չե, այլ ցուցադրական կողմը, դիտողական նյութը : Նման գեղքերում յերեխաները հիմնականում դիտում են. պատմումը տըր և զուգրնթացարար և յերկրորդական դեր և կատարում :

Ալոսկոպի, մողական լապտերի հետ պատմելով, ձգտելով պահպանել գեղարվեստական արտահայտչությունը, պետք ել վորոշակի, պարզ ու հասարակ ձեռվ ընթացակցի նկարին : Բառ վորում, հաղորդման տոնի արտահայտչությունն ու լեզվի գեղարվեստականությունը պետք ել պահպանվեն :

Յուրաքանչյուր կոնկրետ գեղքում պետք ե մտածել, թե դրական-գեղարվեստական այս կամ այն յերկն ի՞նչպես ավելի նպատակահարմար և տալ յերեխաներին՝ պատմելով՝, թե՞ ցուցադրման յեղանակով : Յեթե պատմելու, այդ գեղքում հազիկ թե իլյուստրացիայի կարիք զգացվի : Իսկ յեթե յերկը բնամական և կամ ցուցադրման համար նյութ և բովանդակում և, ընդհակառակը, պատմելու համար հարմար չե, վորովհետեւ դույներով, պատկերներով աղքատ և, այդ գեղքում ավելի լավ և ալոսկոպի, մողական լապտերի միջոցով ցուցադրել, յեթե նկարները լավ են, գեղարվեստական : Խոսքն այս գեղքում յերկուրդական տեղ կզբավի : Սրա կողքին մենք չպետք ե թույլտանք, վոր յերաժշտական, լեզվական տեսակետից ոիթմիկ յերկերի, որինակ հեղինակների, պատմելուն զուգակցվի հակառակարգեստական ինքնազործ թղթե թատրոնի ցուցադրումը : Պետք ե հեղինակը ցուցադրել թղթե թատրոնում, սակայն այդ արդեն չի լինի պատմում, այլ կինի ներկայացում : Պրակտիկ աշխատողներին առհասարակ պետք ե նախազդուշացնել ցուցադրական միջոցների չարաշահությունից՝ գեղարվեստական խոսքի հաղորդման ժամանակակի արմատման միջոց և պատմելու, այլև կարգալու) : Դիտելը միշտ ամելի հեշտ է, քան ուկնդրելը : Ցուցադրման ժամանակ յերեխաները կլուն, զուհինեն, սակայն դրանից գեռ չի հետեւում վոր յերեխաները զրական-գեղարվեստական յերկից ստացան այն առավելագույնը, ինչ վոր պետք է : Այս հարցը պետք ե վորոշեն վոչ թե յերեխաները, այլ դաստիարակները :

Պատմելու հասուեկ և նոր մեթոդ և ողակիոպատմումը : Պատմելու այս տիպի հրկայական նշանակությունը նախ և առաջ կայանում է նրանում, վոր նա զործ ունի մասսայական, բազմամիլիոն առողիորդիայի հետ : Դեռևս չի ուսումնասիրված ուղղվողակամումի առանձնահատկությունը (այդ պատճառով զեռ հաճախակի յերեւոյթ են անհաջող, «ալսվան» կամ ձանձրալի ուղիուհաղորդումները), սակայն հենց այժմ ել կարելի յետեղ, վոր ռադիուհաղորդման պրոցեսում պատմողի կենդանի զեմքի բացակայությունը և յերեխաների ուսակցիաների հաշվառման անհնարինությունը պետք ե փոխհատուցվեն լսողական այլ միջոցներով : Պատճողին չտեսնելու պայմաններում ավելի հեշտ և 2-3 ձայնով պատմում կամ յերաժշտության զուգակցությամբ խոսքի և յերգի հերթափոխում լսել, քան մեկի անընդհատ յեր-

Կար պատմումը: Անշուշտ, այս գեղքում ել ծրադիրը պետք է գեղարվեստական ամբողջություն ներկայացնի: Մյուս կողմից լսողին պետք ե ոզնել պատկերը «տեսանելի» դարձնելու ուղղությամբ: Այն, ինչ կարող ե խանդարել լսելուն, յերբ տեսնում եք պատմողին (գործող անձի պատկերի ցուցադրում, ուղղակի դերակատարում և այլն) ռադիոպատմումի ժամանակ վտանգավոր չե, վորովհետեւ լսողը մինույն ե չի տեսնում ցուցադրումը, այլ միայն լսում ե արտիստների խաղը: Հնչականության տեսակետից վորքան հարուստ ու արտահայտիչ տրվեն պատկերները, այնքան լավ կը բռնվի պատմվածքը՝ լրացնեցիչ աղմուկը, ձայները, ձայնանմանեցումը, յերգը, յերաժշտությունը ռադիոպատմության մեջ միանդամայն ընդունելի յեն և տեղին՝ նըրանք կնապատեն պատմվածքի ավելի հստակ ըմբռնմանը: Ստկայն ռադիոյով ել պատմելու տարբեր ձևեր դոյություն ունեն: Բաղիոյով ժողովրդական հեքիաթի պարզ հաղորդումը լսվում է մեծ հետաքրքրությամբ, չնորհիվ այն բանի, վոր ժողովրդական հեքիաթը դիմաքիկ ե, բովանդակալի, լեզուն՝ լակոնական, յերաժշտական ու պատկերավոր: Այլ աիսի պատմվածքները, վորոնց նյութը լեզվական տեսակետից պակաս պատկերավոր ե և բովանդակության տեսակետից պակաս դրավիչ, պահանջում են արտահայտման լրացնեցիչ միջոցներ՝ յերգի, յերաժշտության դուդակություն, հերթափոխում և այլն:

Գործի հաջողության համար կարենոր ե պարզել մի շաբք մեթոդական հարցեր, վորոնք պատմելու համար պայմաններ են սաեղծում, վորոնք սժանդակում են պատմելուն: Հետեվյալ գլխում («Պատմելու մեթոդիկան») այդ հարցերը լուսաբանվում են գործնական մեծ վորձի հիման վրա: Պրտկուիկ աշխատողները հատուկ ուշադրություն պետք ե դարձնեն նաև պատմելու տեխնիկայի հարցերին, այսինքն պատմվածքի ժամանակն ու նախապարաստմանը: Պատմվածքն արտահայտիչ տալու արվեստի վրա գործադրած աշխատանքը կապահովի յերեխաների գեղարվեստական վառ ապրումները: Այնպիսի մոմենտներ, ինչպիսին այս կամ այն պատմվածքի բովանդակությունը հապորդելու խնդրում ճիշտ տոնն ե, կենդանի, արտահայտիչ ինտոնացիան, ճիշտ չեշտադրումը, ոիթմականությունը և այլն, վճռական նըշանակություն ունեն պատմելու արվեստում: Այս հարցերի մա-

սին հիմնական ցուցումներ տրված են Յ-րդ դիմում («պատմելու տեխնիկան»):

Մեզ թվում ե վերին սատիճանի նպատակահարմար հետևյալ միջոցառումը՝ տեղերում նախադպրոցական մանկավարժական կարինետներին կից կազմակերպել պատմողների խմբակներ, վորոնցում ընդուրկված յուրաքանչյուր դաստիարակ պատմելու տեխնիկայի ուղղությամբ փորձ ձեռք կրերի և ընկերներից վորոնչ բան կսովորի: Խմբակում դաստիարակը մեթոդական դանագան հարցերի պատասխան և ռեվերտուարի ընտրության ուղղությամբ ողնություն կարող ե ստանալ: Պատմելու ուղղությամբ դաստիարակի աշխատանքը բարենպաստ աղղեցություն կունենա նրա լեզվի վրա ընդհանրապես:

Յերեխանների համար հիմնական պատմողը իրենց խմբի դաստիարակը պիտի լինի, սակայն յերեխաններին (առանձնապես մեծերին) պետք ե հնարավորություն տալ և ուրիշ պատմողների լսելու: Անհրաժեշտ ե պարբերաբար հրալիքել ավելի վորակյալ պատմող-մանկավարժի, վորն ավելի գեղարվեստորեն կողատմի, քան խմբի շարքային դաստիարակը: Վո՞րտեղից պետք ե դանել այլպիսի պատմողներ: Նրանց պետք ե աձեցնել: Քաղաքացին կամ ըլջանային ամեն մի մանկավարտեզի, գպրոցի դրագարանի կոլեկտիվում կան հաջող պատմողներ: Պետք ե նըրանց միավորել մի կենտրոնական խմբակում, հնարավորություն տալ վարժվելու, ռեվերտուար մշակելու և սպասարկելու մանկավարտեզներին, գպրոցներին, դրագարաններին:

Մեզ թվում ե, վոր հասկապես այժմ, յերբ այնքան սուր իերպով ե զրվում մանկան ուրախության հարցը, յերեխանների կյանքում լայն կերպով պետք ե գործադրել պատմելու պրակտիկան: Հոգատարությունը դեպի յերեխանները ներկայումս իսկապես նոր ձևով պետք ե վողերորի յուրաքանչյուր դաստիարակի: Անհրաժեշտ ե յերեխանների հարուստ, բովանդակալի, ուրախ կյանքի համար ստեղծել բոլոր պայմանները: Գեղարվեստական պատմումն այս խնդրում քիչ գեր չունի կատարելու:



II ΠΑΣΤΕΛΟΗ ΣΤΕΦΩΝΙΚΑΝ

Գեղարվեստական պատմումի դաստիարակչական աղդեցությունը մեծ չափով՝ կախված է վոչ միայն պատմելու նյութից ու տեխնիկայից, այլև նրանից, թե ինչ չափով՝ մեթոդապես ջշտ է կազմակերպվում պատմելու աշխատանքը։

Հաճախ գեղարվեստական լավ պատմվածքը, անդամ չավ կատարման դեպքում, կորցնում է իր արժեքն այն պատճառով, վոր պատմելու համար չեն ստեղծված համապատասխան պայմաններ, հաշվի չեն առնվաչ յերեխաների տարիքային առանձնահատկությունները, պատմելու համար անհաջող ժամանակ է ընտրված և այն։

Այսպիսով, պատմելը, ինչպես և ամեն մի մանկալարժական պրոցես, պետք է մեթոդապես մշակվի։ Այս կատակցությամբ առաջ են դալիս մի շարք հարցեր՝ պատմելու ժամանակը, տեղը, շրջադրության նախապատրաստումը, մանկական կողեկտիվի կազմակերպումը, պատմելու տեսողությունը և այլն։

Պատմությունը ճիշտ տալու համար դաստիարակը նախ պետք է ճանաչի իր առողիտառիան՝ նրա հետաքրքրությունները, տարիքային հնարավորությունները և, այդ հնարավորություններին համապատասխան, ընտրի պատմելու նյութը։

Պատմելու համար անհրաժեշտ օրգագործյունը

Պատմելը պահանջում է այնպիսի շրջադրություն, վոր կենտրոնանալու հնարավորություն լինի։ Վոչինչ չպետք է դրավի յերեխայի ուշադրությունը, վորը չափազանց անկայուն է մասնավանդ նախադպրոցականի մոտ։ Պատմելու ժամանակ վոչ վոր չպետք է սենյակ մտնի, աղմկի։ Մինչդեռ նախադպրոցական հիմնարկներում դժբախտարար քիչ չեն դեպքերը, յերբ դաստիարակի պատմելու ժամանակ ուրիշները շարունակ դուռը բաց

խումբ անելով, ներս ու գուրս են անում, աղմկում և այլն։ Դրա հետեանքով պատմելու պրոցեսում յերեխաների մեջ ստեղծված տրամադրությունը խանդարավում է, նրանք սկսում են այս ու այն կողմ նայել, ավելի ցրված ուկնդրել։ Այդ տեսակետից ավելի աչքի յեն ընկնում փոքրերը։

Պատմելու տեղը պետք է լինի հարմար, լույսու տրամադրող։ Սմբան ավելի լավ է պատմելն անցկացնել բացովյա՝ պատշաճ-բում, հրապարակում, անտառի բացատում, յերբ յերեխաները հարմար ու ազատ տեղավորվում են դաստիարակի շուրջ և հաճույքով լուս։

Յուրաքանչյուր յերեխա պետք է հարմար տեղ ունենա։ Յեթե պատմվում է սենյակում կամ պատշպամբում, ավելի լավ է յերեխաներին կիսաշրջանաձն նստեցնել աթոռավեների վրա 2-3 շարք ավելի անհանդիստ յերեխաներին և այն յերեխաներին, վորոնց ուշադրությունը չուտ է դրավում կողմնակի յերկույթ-ներով, պետք է պատմողին ավելի մոտ նստեցնել, սակայն այդ պետք է կատարել այնպես, վոր յերեխաներն իրենք չգտան։ Դա հնարավորություն է տալիս դաստիարակին խանդարող յերեխայի ուշադրությունը հրավիրելու վորեւ նշանով, կամ խոսքով՝ «Իոկ գու, Զորիկ, Լոիր, թե հետո ինչ և լինելու» և վոչ թե յերեխային «Ճեկլու» ձեռվ, ինչուս այդ հաճախ կատարվում է՝ «Մո՛ւ, մի խանդարի, Զորիկ, չարություն մի՛ անի, թե չեն չեմ պատմի» և այլն։ Այսպիսի նկատողությունները միայն խախտում են պատմվածքի ամբողջականությունը, մյուս յերեխաներին խանդարում են կենտրոնանալու և թուլացնում են պատմվածքից ստանալիք տպավորությունը։

Կարգավահուրցուն

Յեթե դաստիարակը պատմելու նյութի լավ ընտրություն կատարի և խնամքով նախապատրաստի այն, ապա յերեխաների հետաքրքրությունն ու ուշադրությունը զեղի պատմվածքը առաջավագ լինին։ Հաճախ դաստիարակը յերեխաներից պահանջում է, վոր նրանք իր պատմելու ժամանակ լիակատար անշարժություն և արտաքին անդորրություն պահպանեն։ Դա ճիշտ պահանջ չե։ Վորոշ պատմվածքներ կառուցված են այնպես, վոր յերեխաներին հնարավորություն են տալիս շարժումներ կա-

տարել, աղաղակել, վորոշ խոսքեր ասել, որինակ, Շաբաղի «Սանդուխը», վորը լսելիս յերեխաները և՝ վոտքերով դոփում են, և՝ «ծուղրուղու» յնն կանում. դրանով նրանք ակտիվ մասնակցում են պատմելուն:

Կամ Բիանկիի «Երտասկյուռ» հեքիաթում կա այսպիսի պրիոմ՝ յեր պատմողը հեղինակի անունից հարցնում է ունկընդիրներին. «Արդյոք լսե՞լ եք դուք շերտասկյուռի մասին» կամ «Ի՞նչ եք կարծում, ո՞վ ում կիսաբի». սովորաբար յերեխաները սիրով հայտնում են իրենց կարծիքը, թե ով ում կիսաբի և անկեղծորեն պատասխանում են, վոր շերտասկյուռի մասին չեն լսել:

Հաճախ յերեխաները աշխույժ արձականքում են պատմվածքին՝ ժողովում են, ծիծաղում, հարցեր տալիս, բացականչություններ ան ում և այլն: Սա շատ արժեքավոր է, վորպես նշան այն բանի, վոր յերեխաներն ապրում են պատմվածքով: Այս յերեխույթները զնահատել իրեւ կարգապահության խախտում, պահանջել, վոր յերեխաներն անմիջապես լուեն ու հանդիսաւ մնան՝ մեծ սխալ կլիներ:

Շատ կտրեռ է, վոր պատմելու ժամանակ դաստիարակը տեսնի բոլոր յերեխաներին, յերեխաներն ել՝ դաստիարակին: Սա խոշոր հանակո թյուն ունի, վորովհետեւ պատմողը զլայուն կերպով պետք է հաշվի առնի առողիտորիայի տրամադրությունը՝ կրնատի պատմությունը, յերբ նկատում է, վոր յերեխաները հոգնել են, մեղմացնի վորոշ ազգու տեղեր, յերբ նկատում է, վոր պատմությունը չափազանց ուժեղ տպավորություն է գործում և, ընդհակառակը, ձայնի յելեկեցների և այլ միջոցներով աշխուժացնի այն, յեր նկատում է, վոր յերեխաները ձանձրանում են:

Պատմելու ժամանակը

Գետք է կարողանալ նաև պատմելու ժամանակի ընարություն կատարել: Վոմանք պատմելը յերեխաների համար հանգստի ժամանաց համարելով, այն անց են կացնում այնպիսի ժամանակ, յերբ յերեխաները հոգնած են՝ զբոսանքից հետո, ճաշից առաջ, յերեխաներին կազմակերպելու նպատակով, յերբ ճաշն ուշանում է և այլն: Պատմության ուկնդրության ժա-

մանակ գործում է յերեխայի յերեխակայությունը, ուշադրությունը կենտրոնացած է՝ ապրումները պահանջում են ուժերի ժեծ լարում: Այդ պատճառով բարդ բովանդակությամբ ֆարությին պատմվածքները, վորոնք նոր են յերեխաների համար, պետք ետրվեն որվա առաջին կեսին և այդ ժամանակաշրջանում վորեւ այլ կազմակերպված զբաղմունք տեղի չպետք և ունենա: Այլ խնդիր է, յեր կարծ ու թեթև վորեւ նյութ տրվում է յերեխաների ուշադրությունը կենտրոնացնելու և նրանց հանդըսացնելու նպատակով:

Պատմումն ոգտագործելու զանազան ձեվեր

Յերեխաների համար պատմողը, իրեւ կանոն, պետք է լինի խմբի դաստիարակը: Առանձին դեպքերում կարող են հրագիրվել նաև ուրիշ պատմողներ: Սա բազմազանություն և մըսցնում յերեխաների կյանքում և սովորեցնում են նրանց լսել ապրերի ափակի պատմողների (ամեն մեկը պատմելու իր ձեռ ունի): Սակայն սա հնարավոր է միայն մեծ և միջակ խմբերի յերեխաների համար:

Բարձր խմբերում ավելի հետաքրքիր է, յեր պատմվածքը տրվում է յերեխաների համար կազմված համերդի հետ, իրեւ նրա բաղկացուցիչ մասը՝ յերաժշտական հատված, յերդ և պատմում: Այս մասերի հաջորդականությունը կարող է տարբեր լինել, նայած նրանց բովանդակությանը: Համերդի նյութը միավորվում է ընդհանուր թեմայով: Կատարողները կարող են լինել կամ դաստիարակներ, յեթե նրանք տիրապետում են արվեստի նշված տեսակներին, կամ՝ հրավիրված մարդիկ: Նման փորձ կապարվել է Մովկայի մանկապարեղներում: Նյութն ընտրված էր Լենինի մասին՝ հատված Ծոպենի սգերթից, յերդ Լենինի մասին (խոսք Սպենդիարովայի, յերաժշտություն կրառելի) և Խվենսենի «Փոքրիկներին Լենինի մասին» պատմվածքը, վորոշ կրծառումներով: Դաստիարակներից մեկը համերդի տարբեր մասերը կատում էր կարծ ներածական խոսքերով:

Աշխատանքի նման ձեկը պրակտիկայում հաջողվել են:

Պատմում պարունակող այսպիսի համերդների մասին յերեխաների արտահայտած կարծիքները խոսում են նրանց ստացած խորը տպավորության մասին՝ «ընկեր նինան յերգեց, թե լենին

ինչպես եր սիրում յերեխաներին» կամ, «աղորդելով Լենինի մասին պատմվածքը, յերեխաները նկատում եյին. «Լենինն առել ե՝ յեկեք մենք փոքրիկներին կերակրենք, իսկ մենք քիչ հաց ուտենք»:

Պատմությունը լսելով, յերեխաները պարզ պատկերացրել են, թե ինչի՞ մասին ե խոսվում: Այն մասում, վորտեղ նկարագրում ե, թե ինչպես Լենինի թաղման մոմենտին ամեն ինչ կանգ ե առնում՝ և՛ տրամվայները, և՛ ավտոմոբիլները, մի յերեխա համառոքեն ավելացնում ե. «բոլոր տակսիներն ել եյին կանգ առել»:

Գեղարվեստորեն կատարած պատմվածքները, հեքիաթները հիանալի նյութ են գեղարվեստական յերեկոների համար: Նման դեպքերում լավ կլինի հրավիրել մասնագետ—պատմող, վորն ավելի լավ կկատարի. բացի դրանից, անծանոթ մարդու ներկայությունն ստեղծում ե արտակարգ դրություն, վորը միշտ բավականություն ե պատճառում յերեխաներին:

Ենչպես անցկացնել պատմելը տարբեր տարինի խմբերում

Բոլոր յերեխաները սիրում են, յերբ պատմում են նրանց, և ամեն—մեկն առանձին կարողանում ե լսել: Սակայն ամբողջ կոլեկտիվով լսելն այնքան ել հեշտ չե: Այդ պատճառով վոքրերի խմբում ($3-31/2$ տարեկանների) աստիճանաբար պետք ե անցնել ամբողջ խմբի համար միատեղ պատմելուն: Առաջին յերկու ամսում դաստիարակն ողտագործում ե աշխատանքի այսպիսի պրիորիտետ՝ մեկ-յերկու յերեխայի հետ նկարներ ե դիտում և այդ նկարների մասին զրույց անցկացնում նրանց հետ: Այսուհետեւ, ողտվելով հարմար առիթից, յերեխաների փոքրիկ խըմբակի հետ 2-3 րոպե ունողությամբ պատմություն ե անցկացնում: Յերեխաների ոլահանջով նույնը յերկրորդ անգամ պատմելիս ավելի շատ յերեխաների յե մասնակից դարձնում և այսպես աստիճանաբար ներդրավում ե ամբողջ խմբին: Միջակ և մեծ խմբերի յերեխաները կարող են ունկնդրել ամբողջ կոլեկտիվով: Պատմումը տարիքային յուրաքանչյուր խմբի համար առանձին պետք ե անցկացնել: Այդ առանձնապես նկատի պետք ե ունենալ ժիակոմպլեկտ մանկապարտեզներում, վորտեղ հավաքված են բո-

լոր հասակի յերեխաները: Այստեղ անհրաժեշտ յերեխաներին բաժանել գոնե յերկու մասի: Պատմումն անցկացնելով մեծերի հետ, փոքրերին կարելի յե վորեւ հանդիսա զբաղմունք տալ՝ ինչպես սեղանի: կառուցողական նյութերով զբաղմունքն ե: Կամ, ընդհակառակը, փոքրերին պատմելով՝ մեծերին տալ արագ նկարչություն: Այս ձեռվ աշխատանքը սիստեմատիկ տանելու դեպքում յերեխաները, ինչպես փորձը ցույց է տալիս, շուտով ընտելանում են, և այն ժամանակ, յերբ յերեխաների մի մասը լսում ե դաստիարակի պատմածը, մյուսը հանդիսա աշխատում ե սեղանի շուրջը:

Յերեխաների նման կազմակերպումն անհրաժեշտ ե, վորով-հետեւ անհնար ե այնպիսի նյութ ընտրել, վոր բավարարի բոլորին, հավասարապես հետաքրքրի թե՛ մեծերին, թե՛ փոքրերին. ընդհանուր նյութերը վոմանց (մեծերին) ձանձրույթ կը-պատճառեն, մյուսների (փոքրերի) համար դժվար ու անհասկանալի կլինեն:

Վորքա՞ն հաճախ պետք ե պատմել

Դա կախված է նրանից, թե վորքան հաճախ են տրվում խոսքի մյուս տեսակները, կարդալը, զրույցը և այլն: Իհարկե, ճիշտ չի լինի նույն որը և՛ կարդալ, և՛ պատմում տալ: Գործի ճիշտ դրվագքի դեպքում միշտ և բարձր խմբերում պատմելը պետք ե տեղի ունենա հնդորյակում 1-2 անգամ: Նոր պատմվածքների քանակը կախված է յերեխաների հասակից ու նյութերի բար-դրությունից:

Փոքրերին չպետք է հաճախակի նոր նյութեր տալ. մեծերն ավելի բազմազանություն են պահանջում: Յերեխաները սիրում են միևնույն պատմվածքը մի քանի անդամ լսել:

Պատմվածքի կրկնումը

Պատմվածքի կրկնակի ունկնդրումը յերեխաներին ողնում ե ավելի լավ յուրացնել այն: Բացի այդ, յերեխաների համար հաճելի յե կրկին վերապրել առաջին ընթերցման ժամանակ ունեցած տրամադրությունները. պետք ե նրանց տալ այդ հնարավորությունը: Սակայն պատմվածքը կրկնելիս այն պետք ե հարորդել նույն արտահայտություններով: Յերեխաները հիասթափ-

վում են, յերբ պատմվածքը յերկրորդ անգամ այլ կերպ է հազրարկում։ «Իսկ անցած անգամ այդպես չառացիք», — նկատում են նրանք։

Դաստիարակները հաճախ կանգնում են հետեւյալ հարցի առաջ՝ կարելի յե արդյոք նույն ժամին միենույն նյութը յերկրորդ անգամ պատմել։ Սովորաբար նվազ փորձառու դաստիարակի համար դժվար ե նույն պատմվածքը կրկնել միենույն վորդելությամբ։ սովորաբար և՛ յերեխաների, և՛ պատմողի տրբաժարությունն իջնում է, այդ պատճառով այլելի լավ ե յերկրորդ անգամ պատմելը մի այլ անգամ կատարել։

Սակայն յեթե պատմողը համոզված է, վոր պատմվածքը կրկնելու դեպքում նույն վորակը կտա, պետք ե ընդառաջի յերեխաների ցանկությանը և կրկն պատմի։ Փոքրերի մոտ կարճ ու պարզ պատմվածքների կրկնելը նույնիսկ անհրաժեշտ է, վորովհետև մեկ անգամ պատմածը յերեխաները չեն կարողանում յուրացնել և պահանջում են կրկնել։

Յերկար պատմվածքներ

Մեծ յերեխաներին կարելի յե տալ յերկար պատմվածքներ, կաղմված առանձին եղիգողներից, սակայն միավորված մեկ ընդհանուր գործող անձով, որինակ՝ կոմովոյի «Զելյուսկինցիների մասին», իմենսենի «Լենինի մասին», Ռոզանովի «Տրտվկայի արկածները» պատմվածքները և այլն։

Նման տիպի նյութերը կարելի յե տալ մի քանի նվազով՝ նախ պատմել 2-3 եպիզոդ, մի այլ անգամ կրկն մի քանիսը և այսպես՝ մինչև վերջացնելը։ Սա բարձրացնում է յերեխաների հետաքրքրությունը, նրանք հետեւում են գործողության դարդացման ընթացքին և հետաքրքրությամբ սպասում են, թե հետո ինչ և լինելու։ Զպետք ե մեկը մյուսի հետեւյաց մի քանի տարրեր պատմվածքներ տալ՝ զա հողնեցնում է յերեխաներին և թուլացնում նախորդ պատմվածքից նրանց ստացած տպավորությունը։

Մի բանի յերկեր մեկը մյուսի հետեւյաց պատմելը

Դատ կարձ և բովանդակությամբ վոչ խիստ հակադիր, այլ իրար լրացնող ու խորացնող յերկու պատմվածք կարելի յե տալ

մեկ նվազում, որինակ՝ կենդանիների մասին կարճ պատմվածքներ։

Պատմվածքում հանդիպած անծանոթ բառերը չպետք ե փոխարինել ուրիշներով, վորովհետև գեղարվեստական զրականությունը պետք ե հարստացնի յերեխաների բառապաշարը։ Վոխարինում պետք ե կատարել միայն բացասիկ դեպքերում, յերբ անծանոթ բառը խանդարում է ամբողջ դարձվածքի իմաստը հասկանալուն։

Դատ անծանոթ բառեր կարելի յե հենց պատմելու պրոցեսում բացարել, առանց պատմելն ընդհատելու, որինակ։ «Պառավիլը գնում եր հենված դաշտանին՝ փայտին»։ Իսկ յեթե հետազյում բովանդակությունից յերեխան ինքն կհասկանա բառի իմաստը, ապա բացարության կարիք չկա, ավելի լավ է, վոր յերեխան ինքը մտածի—հասկանա։ Սակայն պետք ե զգուշանալ մեկ անգամից յերեխաներին շատ բառերով ծանրաբեռնելուց։ Այս տեսակետից առանձնապես զգուշ պետք ե լինել փոքրիկների նկատմամբ։

Վարեկ բան պատմելիս, դաստիարակը վորոշ նպատակ է հետապնդում՝ յերեխաների մեջ վորոշակի վերաբերմունք առաջացնել դեպի հերոսներն ու նրանց գործողությունները, ամբապնդել յերեխաների փորձը, ուրախացնել նրանց և այլն։ Յերեխաները, սակայն, յերբեք չպետք ե զգան, վոր պատմվածքը նրանց արվում է ինչ վոր նպատակով։

Պատմվածքի մորալը

«Յերբեք չպետք ե ընդգծել մորալը կամ ուժեղ ձնշում գործադրել լսողի վրա։ Դա կլինի վաս մանկավարժություն և արվեստ», — ասում ե Պարտրիջն իր «Ինչպես և ինչ պատմել յերեխաներին» դրֆում։ Մինչդեռ դաստիարակները շատ են սիրում պատմվածքը վերջացնել զանազան տեսակի հարցերով ու նկատողություններով։ «Արդյոք նա լավ վարվեց» կամ՝ «Աչաթե ինչ ե նշանակում չլսել» և այլն։

Պատմվածքն ինքը պետք է խոսի իր մասին, առանց մորալի և իմացական մոմենտի դիտավորյալ ընդգծման։

ԶՐՈՒՅՑՆԵՐ ՊԱՏՄԱԾԻ ԿԱՊԼԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Նյութն առաջին անդամ պատմելուց հետո յերեխաների հետ զրույց չպետք է ունենալ՝ նպատակ ունենալով պարզել, թե ինչ հասկացան յերեխաները։ Այդ վաղաժամ վերլուծությունը թուլացնում է յերեխաների ստացած տպավորությունը։

Այլ խնդիր է, յերբ յերեխաներն իրենք են հարց տալիս։ Դաստիարակն այս գիտքում, իշարկե, պետք է պատասխանի նրանց հարցերին, ոժանդակի զրույցին, սակայն չխորացնի հարցերը։ իսկ պատմվածքի նյութը կարելի յէ հատուկ զրույցի համար ողտագործել, հետագայում որինակներ բերել նրանից, յերբ հարմար առիթ հանդիսանա։ Պատմելուց անմիջապես հետո զրույցը հանձնարարելի չե, վորովհետև դա թուլացնում է տըպավորությունը։ Սրանով ընդունվում է նյութի հաղորդման նըպատակը։ Զրույցը հարկավոր չե նաև պատմելուց առաջ։ Յեթե դաստիարակը ցանկանում է նախապես վորմե բան բացատրել, ծանոթացնել նոր նյութին, ապա այդ կարող է կատարել նախորդ որը զրույցի, խոսակցության միջոցին, նկարներ ցույց տալով։ Որինակ, Հյուսիսի մասին՝ մի շարք նկարներ դիտելով, դաստիարակից բացատրություններ լսելով, յերեխաները հաջորդ որն ավելի ուշադիր կլսեն դաստիարակի պատմությունը Հյուսիսի մասին։

Դաստիարակների առաջ հաճախ հարց է ծառանում՝ հարկավո՞ր ե արդյոք պատմելու կապլակցությամբ իլյուստրացիաներ կատարել։

ՊԱՏՄՈՒՄ ՅԵՎ ԻԼՅՈՒՍՏՐԱՑԻԱ

Լավ ու ճիշտ դրված գեղարվեստական պատմվածքը յերեխաների մոտ ստեղծում է տեսողական վառ պատկերներ։ Յերեխաներն ունենդրելով, սովորում են տեսնել այդ պատկերները, վորպիսի հանդամանքը զարգացնում է նրանց ստեղծադրժական յերեխայությունը։

Հաճախ նկարի միջոցով տրված պատրաստի պատկերը կարող է չհամապատասխանել այն պատկերին, վոր ստեղծել է յերեխան՝ լսելով պատմվածքը։ Դա կարող է քառոս ստեղծել յերեխայի պատկերումների մեջ և հիսութափություն պատճառել յերեխային։ Պատմելու միջոցին նկարի ցուցադրումը յերեխայի

ուշադրությունը բաժանում է յերկուսի՝ նկարը, վորպես ավելի ուժեղ գրգռիչ, յերեխայի ուշադրությունը հեռացնում է պատմվածքից։ Ուրիշ են միքանի նախաղասությունից կազմված կարճ պատմվածքները վորպիկների համար, դրանք անմիջապես կարելի յէ իլյուստրացիայի յենթարկել համապատասխան նկարով կամ խաղալիքով։ Փոքրիկների փորձը գեռ չափազանց նվազ է, վորպեսզի միայն խոսքի միջոցով նրանց մոտ հնարավոր լինի ստեղծել համապատասխան պատկերացումներ։

ՆԿԱՐԻ ՔՈՎԱՆԴՊԱԿՈՒԹՅԱՅ ՊԱՏՄՈՒՄ

Դա, սակայն, չի բացառում պատմվածքի այնպիսի ձեւը, յերբ յելակետը հանդիսանում է տեսողական պատկերը, վորին զուգակցվում է դաստիարակի խոսքը (եպիդիասկոպ, մողական լապտեր, պարզապես հետաքրքրական նկար)։ Այսպես որինակ՝ խմբի սենյակում կախվում է նկարը, և յերեխաները դիտում են այն։ Նկարը կարող է մեկ-յերկու որ կախված մնալ սենյակում, ապա դաստիարակը յերեխաներին պատմում է նկարի բովանդակությունը։ Նկարն այս գեպքում յերեխաների ուշադրության կենտրոնում է, դաստիարակի պատմելու ընթացքում նա յերեխաների աչքի առաջ է։ դաստիարակն իր խոսքով միայն պարզաբանում է նկարը։

Փոքրիկներին նկարի բովանդակությունը պետք է պատմել կարճ նախաղասություններով՝ առարկաների անուններից ու դորձողություններից, հաճախ նաև ձայնանմանություններից կազմված։

Մեծ յերեխաների մոտ նկարից ստացած պատկերացումը չի սահմանափակվում նրա տեսանելի բովանդակությամբ։ Յերեխաներն արդեն յերեակայությամբ պատկերացնում են այն, ինչ կարող եք հետազոտել կատարվել կամ ինչ կատարվել են նկարում պատկերված դորձողությունից առաջ։ Նրանք իրենք լրացնում ու զարգացնում են դաստիարակի պատմածը։ Նկարի բովանդակությունը վերակենդանացնող պատմվածքն ովնում է յերեխաներին հասկանալու նկարում արտահայտված ֆիզուրաներն ու յերեայթները վորոշ փոխհարաբերությամբ։ Պատմելու համար ընտրած նկարները պետք են լինեն լավորակ, վորովհետեւ դա զարգացնում է յերեխաների գեղարվեստական հաշակը։

Միջակ և բարձր խմբերում պատմելուց, առանձնապես յերեխաների համար գրավիչ պատմելուց հետո նրանց մեջ ցանկություն և առաջնում իրենց տպավորություններն արտահայտել: Այդ նպատակով նրանք դիմում են մատիտի, ներկերի, թղթի, կավի ողնության: Դաստիարակը, սակայն, չպետք է շտապի դրսելորել յերեխաների տպավորությունները՝ նրանց արտահայտման պահանջը սովորաբար միանդամից չի առաջանում:

Մանկական այդ աշխատանքներից դաստիարակը կարող է յեզրակացնել, թե պատմվածքի կամ հեքիաթի վո՞ր տեղերն են առանձնապես դուր յեկել յերեխաներին, ինչպիսի՞ ճաշակ ունեն նրանք, ինչո՞վ ավելի յեն տարվում, լեզվական ինչպիսի՞ պատկերներ ու դարձվածքներ են առանձնապես տպավորվել նըրանց դիտակցության մեջ: Մի մանկապարտեղում յերեխաները «կատուն, աքլորն ու աղլինը» հեքիաթի ունկնդրությունից հետո հեքիաթի հերոսների մասին բազմապիսի նկարներ են նկարել: Հետաքրքրական ե, թե նրանք դրաֆիկ յեղանակով ինչպես են պատկերել «սուր ըրջադարձ» արտահայտությունը: Միմյանցից վոչ հեռու նկարել են յերկու խրճիթ և դրանց միջև՝ թըղթի համարյա ամբողջ եղը բռնող վառ դեղին դույնի վոլորապը տույտ ճանապարհը:

Կատուն, վոր աքլորի համար կովում և աղլինի հետ, ամեն տեղ նկարված ե փայտով զինված: Պայմանական, հեքիաթային կերպարանքը նույնությամբ արտահայտված ե և՛ նկարում:

Հարց ե առաջնում՝ այդ զբաղմունքները յե՞րբ ավելի լավ ե տալ՝ պատմելուց անմիջապես հետո՝, թե՞ վորոշ ժամանակից հետո: Յերեխաները յերեխեմն չուտ են արտահայտում իրենց տպավորությունները այս կամ այն յեղանակով, յերեխեմն՝ մի քանի որվա ընդմիջումից հետո: Պատահում են դեպքեր, յերեյեխաների՝ պատմվածքից ստացած ապրումներն արտաքին վարեկ գրաելորում չեն դտնում, չնայած մեծ լարվածությամբ ու ուշադրությամբ են ունկնդրել: Սովորաբար նոր պատմվածքը յերեխաները յերկար ժամանակ իլյուստրացիայի չեն յենթարկում նկարելու, ծեփի միջոցով: ծանոթ, կրկնվող պատմվածքներն ավելի շուտ են իլյուստրացիայի յենթարկում: Միանդա-

մայն հնարավոր ե ոգնել յերեխաներին, վոր նրանք իբենց վերաբերմունքը ցուցյ տան դեպի պատմվածքը: Դրա համաբարձմանը ե պատմվածքի սյուժեն առաջարկել իբրև թեմա՝ նկարելու կամ ծեփի համար:

Յերեխաների համար իրենց տպավորություններն արտահայտելու մյուս ձեւը խաղն ե, վորի միջոցով նրանք պատկերում են պատմվածքի կամ հեքիաթի գործող անձերին: Իրենց խաղերում ու զբաղմունքներում յերեխաները շատ հարուստ կերպով են տալիս հեքիաթը, վորպես պատկերներով հարուստ, հստակ ու ֆաբուլային նյութ: Շատ արժեքավոր են յերեխաների նման խաղերը, վորովհետեւ նրանք, նախ, ամրապնդում ու խորացնում են հետաքրքրությունը զեպի պատմած նյութը, յերկրորդ, նպաստում են խոսքի զարդարմանը, վորովհետեւ խաղի ընթացքում յերեխաները կրկնում են հերոսների խոսքերը՝ հաճախ լրացնելով այդպիսիք իրենց ստեղծագործությամբ: Այդ խաղերը, նայած յերեխաների ակտիվությանը և դաստիարակի կարողությանը, կարելի յէ բարդացնել՝ մտցնելով պարզ դրսուներ, դիմակներ: Վորտեղ հնարավոր ե պետք ե մտցնել նաև յերաժշտություն: Այսպիսով պարզ խաղը վեր ե ածվում զբաժանիզացիայի, վորտեղ բարձր խմբերի յերեխաները կարող են զերաբաշխում կատարել իրենց մեջ, վորոշել գործողության տեղը, հրավիրել փոքրիկներին, վորպես հանդիսատեսների և այլն: Յերեխաներին պետք ե աղաս թողնել խաղալու այնպես, ինչպես իրենք են հասկանում: չպետք ե նրանց մարզել, առանձին պողմներ ու ֆրազներ անդիր անել տալ, ինչըն այդ սովորաբար կատարվում ե մանկական ներկայացումներին նախապարաստվելիս: Նախապարոցական յերեխաների համար սովորվի դերը դժվար ե ու անհետաքրքրական:

Յերեխաները սիրում են հաճախ վերապատճել լուծը և կամ սէ փական պատմվածք հորինել: Այդ յերեխութը պետք ե քաջալերել ու գործադրել, վորովհետեւ նման զբաղմունքները պարզացնում են յերեխաների լեզուն ու նրանց ստեղծագործական յերեխակայությունը: Աշխատանքի այս ձեւը շատ հետաքրքրական ե, շատ բան ե տալիս և՛ յերեխաներին, և՛ դաստիարակին:

նա, յուրացնի և կարողանա յուրաքանչյուր կոնկրետ գեղքում
հաջողությամբ կիրառել:

Դաստիարակի աշխատանքն այն յերկի վրա, վորը նա ոգ-
տագործելու յեւ մանկական առողիտորիայի համար, բազմազան
է. այդ աշխատանքն ամենոց առաջ կախված է տվյալ յերկի բը-
նույթից՝ նրա բովանդակությունից ու ձեւից: Նախադպրոցական
հասակի յերեխաներին կարելի յեւ պատմել ինչպես մանկական
գեղարվեստական յերկերը և ժողովրդական ստեղծագործու-
թյունները, այնպես ել զաստիարակի սեփական պատմվածքները:
Թե բովանդակությամբ և թե ձեռվ արժեքավոր վո՞չ բոլոր ման-
կական յերկերն են մատչելի նախադպրոցականներին. այդ պատ-
ճառով նրանցից մի քանիսը մասնակի վերամշակման պետք ե
յենթարկվեն դաստիարակի կողմից: Այսպիսով՝ պատմողի առաջ
դրված ե յերեք ինդիր՝

1. Աշխատանք պատրաստի պատմվածքի վրա, 2. աշխա-
տանք պատմվածքի վրա, վորը վորոշ վերափոխման կարիք ու-
նի, 3. աշխատանք սեփական պատմվածքի վրա:

Թեև պատմողը բոլոր գեղեցերում ել պետք ե ապահովի
յերկի բարձրորակ հաղորդումը, սյուժեյի, պատկերի պարզու-
թյունը և լեզվի ճշությունը, այնուամենայնիվ յերկի վրա
աշխատանք կատարելու յուրաքանչյուր տեսակը տարբերվում է
մյուսներից, առանձին մոռեցում է պահանջում:

Համառոտակի կանդ առնենք պատմողի աշխատանքի ամեն-
մի տեսակի վրա առանձին: Վո՞րն ե յերկի բովանդակության,
ձեւի ու տեխնիկայի վրա պատմողի կատարելքը աշխատանքը:

Վերամշակում չպահանջող յերկի վրա պատմողի
կատարելիք աւելանելը

Նախ անհրաժեշտ ե նշել, վոր այստեղ յերկի արտահայտչու-
թյունն ստեղծվում ե և՛ հեղինակի, և՛ պատմողի՝ միասեղ
սպեզալիտարժական աշխատանքով: Հեղինակը տալիս ե գեղար-
վեստական յերկ, պատմողը հաղորդում է այն, դրսեորում ե
նրա եյտթյունը: Գեղարվեստական յերկն իր կառուցվածքի,
վոճի ու լեզվի մեջ ունի համապատասխան արտահայտչություն:

Հեղինակը բառերի միջոցով տալիս ե տեսողական նյութ,
պատկեր, նկար: Յերկի բառային արտահայտությունը հսկայու-

III ՊԱՏՄԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՆ

Աւմ հաջողվել ե տեսնել, թե ինչ ուշադրությամբ ու հե-
տաքրքրությամբ են յերեխաները լսում պատմվածքը, ինչպես
նրանց դեմքերին արտահայտվում են տվյալ պատմվածքի առա-
ջացրած բոլոր զգացմունքները, նա ամեն անդամ համոզվել է,
թե վորքան ուժեղ ե գեղարվեստական պատմումի աղդեցությու-
նը յերեխայի վրա: Յերեխաները գեղարվեստական պատմվածք-
ներ շատ են սիրում և լսում են շունչները պահած: Սակայն,
քիչ չեն գեղեցերը, յերբ բովանդակությամբ ու ձեռվ հրաշալի
յերկը՝ չի աղդում յերեխաների վրա, վորովհետեւ տրվում է
չոր, վոչ արտահայտիչ: Պատմվածքի տալու ձեւը, պատմելու
տեխնիկան հսկայական նշանակություն ունի: Խոսելով յեր-
կը գեղարվեստական տեսակետից ճիշտ տալու մասին, Ստանիս-
լավսկին նշում եր, վոր «դրա համար քիչ ե միայն տաղանդը և
բնական տվյալները, անհրաժեշտ են նաև հմտություններ, տեխ-
նիկա» («Իմ կյանքը գեղարվեստում»):

Հաջող պատմողը յերկի գեղարվեստական հաղորդումով
դրսեռում ե նրա բովանդակությունը, հուզում ու դրավում ե
լսողին, ստիպում ե տեսնել պատկերները, ապրել այն զգաց-
մունքները, վորոնք զարթեցնում ե պատմվածքը:

Պատմվածքն ավելի ուժեղ տպավորություն թողնում է այն
ժամանակ, յերբ պատմողն այն հաղորդում է համոզված ու
վորոշակի, ճիշտ ե նկարագրում բովանդակությունը՝ տալով
այն հոգական ապրումների համապատասխան տոնով, յերբ նա
լիովին տիրապետում է տեքստին: Այս դեպքում պատմվածքը
դառնում է կենդանի, թարմ ու աղդեցիկ: Իսկ դրա համար պա-
հանջիւռմ է մեծ ու լուրջ աշխատանք կատարել յերկի բովանդա-
կության վրա, ինչպես և՝ նրա լեզուն յուրացնելու համար: Բա-
ցի այդ, գոյություն ունեն առողջանությամբ կարդալու մի շարք
տեխնիկական պրիստներ: Պատմողը պետք է այդ պրիստներն իմու-

կան նշանակություն ունի: Պատմողը հեղինակի լեզվին չափազանց խնամքով պետք է վերաբերվի: Ահա թե լեզվի մասին ինչ է ասում դրչի այնպիսի մեծ վարպետ, ինչպիսին Մովսեսանն է. «Ինչ առարկայի մասին ել խոսելու լինենք, դոյտթյուն ունի այն արտահայտող միայն մեկ բառ, մեկ բայց, վորը չնչավորում է այդ առարկան և մեկ ածական, վորը վորոչում է այն: Յեվ ահա պետք է փնտռել այնքան ժամանակ, քանի դեռ չի գլուխվել այդ բառը, բայն ու ածականը և յերեք չբավարարվել մստավորով, յերեք չը իմել փոխարինման միջոցին, անդամ հաջող փոխարինման, կամ լեզուն կոտրել, աղճատել՝ դըժվարությաներից խուսափելու համար»: Հոկայական պատասխանակություն են ընկնում պատմողի վրա՝ դրսելորելու յերկե եյտթյունը, նրա գեղարվեստական իմաստը. բովանդակությունը, պատկերները, լեզուն հմտորեն հաղորդելու միջոցով յերկը հացնել ունկնդիրների դիտակցությանը, ըմբռնել տալ նրանց:

Պատմողը կարծես իր պատմած անցքերին ականատես յեղել: Պատմողի ապրումները, նրա վերաբերմունքը դեպի պատմվածքի դործողությունը և հերոսները հաղորդվում են ունկնդիրներին, պատմվածքը դառնում է կենդանի, դործուն, դրավիչ: Իսկ սրա համար անհրաժեշտ է, վոր պատմողը լուրջ աշխատանք կատարի ավյալ դրվածքի պատմելուն նախապատրաստվելու ուղղությամբ:

Պատմվածքի գեղարվեստական եյտթյունն ըմբռնելու համար անհրաժեշտ է, վոր պատմողն ամբողջին համակի պատմվածքով, հասկանա ու յուրացնի պատմվածքի բովանդակությունը, նրա կառուցվածքը, այսինքն, նրա բաղկացուցիչ մասերը, առանձնացնի դիմավորը, հետեւի դործողության զարդացմանն ու վորոշի նրա կուրմինացիոն կետը, այսինքն հուզական բարձրագույն լարվածության մոմենտը և յուրացնի հեղինակի լեզուն: Պատմողն անհրաժեշտաբար լավ պետք է իմանա զործող անձերին, դրսերի նրանց բնորոշ առանձնահատկությունները, գորպեսզի նրանց ունկնդիրներին հաղորդելու համար ավելի ճշտորեն պատկերելու միջոցներ գտնի: Պատմողն այնպես լավ պետք է յուրացնի տեքստը, վոր բոլորովին ազատ, առանց ընդհատումների ու վերհջումների կարողանա հաղորդել իր ունկնդիրներին: Պատմութը համոզեցուցիչ և հնչում,

յերբ պատմողի բերանից հարկավոր բառերը դուրս են դալիս վորոշակի, համոզված:

Հարկավոր ե արդյոք տեքստն անդիր անել: Իրագործելով յերեխայի գեղարվեստական դաստիարակության խնդիրները, մենք նրան տալիս ենք իսկական արվեստի որինակներ: Անհրաժեշտ ենակ գրական-գեղարվեստական յերկերը յերեխաներին տալ Քուշինի, Տուշ անդրբին հարազատ: Ազատ, իր խոսքերով տալ Պուշկինի, Ժուան Ռուզինի, Թումանյանի ստեղծագործությունները, ժողովրդական հեքիաթները չեկալիի, այլապես նրանք կորցնեն իրենց արժեքը: Բացի այդ, ամեն մի գրող ունի իր վոճը, իր գրելակերպը. անհրաժեշտ ե աստիճանաբար յերեխային հաղորդակից դարձընել բաղմազան վոճերի, նրա մեջ դաստիարակել գեղարվեստական հոտառությունը, իսկ դրա համար անհրաժեշտ է, վոր տական հոտառությունը, իսկ դրա համար անդիր իմանա: պատմողը բարձր գեղարվեստական յերկերն անդիր իմանա: Լավ հասկացված ու լավ յուրացված յերկը պատմողի բերականությունների ձեռվ չի հնչի՝ պատմողը կարողանա համակենա պատմությունը ուղղությամբ, մտնել իր դերի մեջ և տալ այն իրեն իր վեհականը:

Պրակտիկ աշխատանքում լինում են գեղքեր, յերբ պատմողը դիչ աշխատանք է կատարում պատմվածքը, ինչպես և նրա դուռը յուրացնելու ուղղությամբ: Թերաղնահատելով այդ մոմենտի նշանակությունը, դաստիարակը հաճախ յերեխաներին պատմում է հավաճեպ պատրաստած, պարապմունքի նախորյաց պատմում և հավաճեպ պատրաստած, պատմություններով: Բացի այդ, պատմողին «Փրկող» ավելորդաբանություններով): Բացի այդ, պատմողը չի կարող ուշադրություն դարձնել իր պատմելն արտահայտիչ դարձնելու վրա, քանի վոր նա կաշկանդված է՝ տեքստը վատ իմանալու հետեւանքով: Այս պայմաններում պատմության վագաղլում, իսպանական գործությունը կորցնում է իր արժեքը: Յերեկմն լինում են գեղքեր, յերբ դաստիարակին հաջողվում է հանպատրաստից հաջող պատմել, սակայն չի կարելի ամեն գեպքում հույսը պատմության հաջող անցնի, միքանիսն անհաջողության կմատնվեն: Յերեխաները շատ են զգում պատմվածքի գեղարվեստա-

Համար հաղորդումը՝ սովորաբար նրանք դաստիարակին խնդրում են յերկրորդ անգամ պատմել այն, ինչ լավ և մշակել դաստիարակը, ինչ իր բովանդակությամբ ու հազորդման գեղարվեստական ձևով խիստ գուրք է յերկել յերեխաներին։ Թե ի՞նչ պետք է անել պատմելն արտահայտիչ դարձնելու համար, այդ մասին հետո, քանի վոր դա հայասարապես վերաբերում է և՛ պատրաստի, և՛ վերամշակված, և՛ ինքնուրույն պատմվածքներին։

Պատմողի անելիքը վերամշակման կարիք ունեցող յերկի Եկատմամբ

Հաճախ դաստիարակը պատմելու համար պատրաստի նյութ չփառնելով, վերամշակում է գեղարվեստական յերկը, հարմարեցնելով այն նախաղպրոցական հաստիկի յերեխայի պահանջներին։ Դա յերեւն մեծ չարիքի պատճառ է դառնում։ Դաստիարակը գեղարվեստական յերկի վերամշակմանը մեծ զգուշությամբ պետք է վերաբերի։ Չի կարելի գեղարվեստական յերկն աղձատել, հարմարեցնելով այն նախաղպրոցականի հասկացողությանը, զոհարքելով «մանկավարժական» նպատակներին։ Քիչ չեն դեպքերը, յերբ դաստիարակն շտապում է յերեխաներին ժամանակից առաջ ծանոթացնել անմատչելի գեղարվեստական յերկերին։ Վոչ նախաղպրոցականի համար դրված թե իր բրդանդակությամբ, թե ձեռով նրան անմատչելի գեղարվեստական յերկը դաստիարակը վերամշակում է ըստ իրեն, բացատրում, սպարզեցնում և այսինքն կործանում յերկը։ Ի՞նչ հարկավոր և «Գուլիվերի ճանապարհորդությունը» հարմարեցնել նախաղպրոցական յերեխայի պահանջներին։ Ինչո՞ւ յե դաստիարակը պարզեցնում, իր խոռքերով պատմում Պուչկինի «Վոսկե ձկնիկ» հետքիմաթը, Նեկրասովի «Մալայ պապն ու նապաստակները» վոտանալորը։ Նման դեպքերում դաստիարակը, գեղարվեստական յերկին հասցրած վնասից բացի, վնասում է նաև յերեխաներին։

Դաստիարակը գեղարվեստական մի շարք յերկեր վաղաժամ ու աղճատված ձեռով տալով յերեխային, դրանով զրկում է նրան իր ժամանակին այդ յերկերը կարդալիս համապատասխան թարմությունն ու անմիջականությունն զգալու հնարավորությունից։ Հաճախ դաստիարակը վերամշակում է և՛ այնպիսի բաներ, վարոնք ամենեին դրա կարիքը չեն զգում։ Ժաղաված

դական հեքիաթները։ Այսպես որինակ՝ մի դաստիարակ, չըավարարվելով «Շաղգամ» հեքիաթի լակոնական վոճով ու ոիթմով, վերափոխել եր այն ըստ իրեն, մոտավորապես այսպես՝ «Լինում ե չի լինում մի պապիկ և մի տատիկ։ Նրանք ունենում են մի թոռնիկ, անունը՝ Մաշնկա։ Պապիկը ծե՛ր, ծեր եր, յերկա՛ր, սպիտակ մորուքով։ տատիկն ել պառակ եր, նա առջել սպիտակ, մաքուր գողնոց եր կապում, դլսին՝ սպիտակ թաշկինակ։ Իսկ ինչքան լավն եր նրանց թոռնիկը՝ սիրալիր, ըսող...» և այսպես շարունակ։ Ստացվել եր 8 եջից կազմված մի «աշխատություն»։ Զբավարարվելով հեքիաթով, դաստիարակը «մանկավարժական» հասրեներ և մտածում՝ համապատասխան մորալով, հետեւույթներով և կուլուուր-հիգիենիկ ունակություններով հանդերձ։ Սակայն վորոշ դեպքերում կարելի յե այնպիսի յերկի վերամշակում կատարել, վորը, պակաս դեղարվեստական լինելով, միաժամանակ նախաղպրոցական յերեխայի համար մանկավարժական վորոշ արժեք ու հետաքրքրություն և ներկայացնում։ Հմուտ պատմողը կարող է վորոշ չափ վերափոխել նման յերկերը՝ յերկար, ձգձգված տեղերը բաց թողնել, լեզուն դարձնել ավելի պատկերագոր, ավելի հուղիչ։ Նման փոփոխությունների հետեւանքով դրվածքն ավելի կենդանի յե զառնում և ավելի ընդունելի, մանավանդ վատ, արտահայտիչ ձեռով հաղորդելու գեղգում։

Լինում են գեպքեր, յերբ կարիք է զգացվում վորոշ վերամշատական յենթարկել նաև գեղարվեստական յերկը, յերբ նա շատ է յերկար, նկարագրական մասերը չափ են և այլն։ Այսպես որինակ՝ Բիանկու «Անտառի տնակներ» պատմվածքը նախադպրոցականի համար ունի թե՛ գեղարվեստական և թե՛ մանկավարժական արժեք, սպառական պատմվածքում այնքան շատ են թուզունների հանդիպումները ծիծեռնակների հետ, վոր կարող են հողնեցնել յերեխաներին։ Հաշվի առնելով այն հանդամանքը, վոր պատմվածքը կազմված է կրկնություններից (ծիծեռնակը թուզում է մեկ թուզունից մյուսի մոտ), դաստիարակը կարող է մեկ-յերկու թուզուն բաց թողնել, վորից պատմվածքն իր արժեքը չի կորցնի, այլ, ընդհակառակը, կունկնդրվի ավելի մեծ ուշադրությամբ ու հետաքրքրությամբ։

Դաստիարակի հորինած պատմվածքները

Հաճախ դաստիարակն ինքն է զանազան պատմվածքներ հո-
րինում յերեխաների համար: Այդ պատմվածքները վերաբերում
են յերեխաների համար հետաքրքրական անցքերի, ժամանակա-
կից հերոսական դեպքերի, դաստիարակի մանկական հիշողու-
թյուններին, յերեխաների կյանքից վերցրած զանազան դեպքե-
րին և այլն: Այստեղ դաստիարակը պատասխանատվություն է
կրում և՝ համապատասխան բովանդակությամբ նյութի ընտրու-
թյան, և՝ պատմվածքի կառուցման, և՝ լեզվի վորակի համար:
Այստեղ դաստիարակը միաժամանակ հանդես է դալիս և՝ վոր-
պես պատմվածքի հեղինակ, և՝ վորպես պատմող: Շատ կարե-
վոր է, վոր նման պատմվածքներ կազմելիս հաշվի առնվեն նա-
խադպրոցական հասակի յերեխայի ըմբռնման առանձնահատկու-
թյունները՝ յերեխան ավելի հեշտ ե ըմբռնում կոնկրետ բավան-
դակությունը, վորոշակի սյուժեն, պարզ պատճերը, «ընդհան-
րապես», կոնկրետ փաստերից գուրկ հաղորդումները և վերա-
ցական դատողությունները մատչելի չեն յերեխաներին, չեն հաս-
նում նրանց դիտակցությանը:

Մի սկսնակ դաստիարակ պատմեց այսպես. «Դանդաղորեն
սառչող արեգակի հետ մեղմորեն նստում ե տաք փոշին, և
ամբողջ բարձրությամբ բացվում են բուրգածն վիթխարի բար-
տիները...» և այլն: Պատմվածքը յերեխաների վրա վոչ մի տը-
պավորություն չթողեց, վորովհետեւ տրվեց վերցական— նկա-
րագրական ձևով, մինչդեռ յերեխան գործողություն, կոնկրե-
տ սյուժե յե սիրում: Այս տեսակետից դաստիարակ-պատմողի
համար որինակ կարող է ծառայել ժողովրդական հեքիաթը: Ու-
շադրությամբ ուսումնասիրելով հեքիաթները, դաստիարակը կը-
դտնի նրանց հմայքի, նրանց գեղարվեստական, հուզական ներ-
դորձման դադունիքը: Հեքիաթի որինակով պետք է սովորել,
թե ինչպես պետք է կառուցել պատմվածքը և ինչպես այն տալ
պատճերավոր, լակոնական, շեշտակի լեզվով: Հենց հեքիաթն է,
վոր գործողության իր գինամիկայով և պատճենների ուժով
հանդերձ, այնքան ժլատ է բառերի ինդրում, վոր գժվար և
ժեկ բառ անդամ դուրս հանել տեքստից:

«Կարդացեք ժողովրդական հեքիաթները, յերիտասարդ գրող-

ներ, վորպեսզի տեսնեք ոռւսաց լեզվի հատկությունները», —
նշում եր Ա. Ս. Պուշկինը:

Հաճախ դաստիարակի պատմվածքները տառապում են դի-
տավորյալ կերպով ընդգծված բարոյախոսությամբ: Դաստիա-
րակն շտապում է ինքը յերեխային բացահայտել, թե վորն ե
լավ, վորը՝ վատ և սովորեցնել լավ լինել: Յերեխայի համար
ավելի արժեքավոր, ավելի ոգտակար է և անհամեմատ ավելի
համողեցուցիչ, յեր նա ինքն է գալիս համապատասխան յեզ-
րակացության, յեղակացություն, վորը բղխում է պատմված-
քի ընթացքից, գործող անձերի գործողություններից:

Ինքնուրույն պատմվածք հորինելը բարդ, պատասխանա-
տու, միաժամանակ անհրաժեշտ գործ է. դաստիարակը, պատ-
րաստի համապատասխան նյութ չգտնելով, հաճախ սովորված է
ինքը հորինել: Բացի այդ, կյանքում տեղի յեն ունենում այն-
պիսի ցայտուն անցքեր (չելյուսկինցիների եպոպեան), վորոնց
հետեւ գիրքը հասնել չի կարող: Իսկ յերեխաներն ամբողջ
յերկրի հետ միասին ապրում են այդ անցքերով:

Պրակտիկ աշխատանքում վատ, անփույթ կազմած պատմ-
վածքների կողքին մենք ունենք նաև ավելի բարձր վորակի
պատմվածքները: Այդպիսին են ի. Դ. Ստուխնսկայայի հորինած
«Խորհուրդների թերը» խորատառությամբ պատմվածքները,
վորտեղ նա գեղարվեստական ձևով պատմել և յերեխաներին
ողաշուների թոփչների մասին՝ ոգտագործելով լրագրական
նյութերը: Հետաքրքրական են նաև չելյուսկինյան գիտարշավի
մասնակից, նախկին նախադպրոցական Ո. Ն. Կումովայի պատ-
մը ըվածքները չելյուսկինցիների մասին:

Պատմողի աշխատանքը պատմվածքն արտահայտի
գարձնելու համար:

Զեռնամուխ լինելով պատմվածքի մշակմանը, պատմողն ա-
մենից առաջ վորոշում է նրա տոնը: Ամեն-մի գրվածք ունի իր
բնույթը, վորը վորոշվում է նրա թեմատիկայով, բովանդա-
կությամբ ու ձևով:

Վյուկովի «Կատուն կորել և» պատմվածքն ու «Բոքոնիկ»
հեքիաթն իրենց եյությամբ ուրախ են և պատմողից պահան-
ջում են հաղորդման համապատասխան թեթև, ներքնադեմ ու-

բախ տոն։ Լավ չե՞ս, յերբ ուրախ պատմվածք տալիս, պատմողն ինքն ալիւրդ ուրախություն և արտահայտում, ծիծաղում և և այլն։ Յերեմին միամիտ լրջությունն ավելի յէ ընդդում դրության կոմիզմը։

Այլ բնույթի պատմվածքներ, ինչպես «Զելյուսկինի խորտակումը», վորանեղ մարդկանց հերոսությունը, թեմատիկայի ու դործողության լրջությունն այլ ապրումներ են առաջացնում ուրիշ տօն են պահանջում։ Այս կարգի պատմվածքների տոնը պետք է լինի լուրջ, նշանակալի։

Պատմողը պետք է կարողանա վորոշել պատմվածքի հիմնական տոնը, հասկանա պատմվածքի եյությունը և պատմվածքի հիմնական տոնի Փոնի վրա տա պատմվածքը՝ ողտագործելով պատմելու տեխնիկական պրիումները։

Պատմելու տեխնիկայի հիմնական պրիումներից մեկը ինտոնացիայի ճիշտ ոգտագործումն է։ Խոսքի տարրերը բովանդակությունները պատմողը հաղորդում է մարդու ձայնի բաղմապիսի յերանդներով, բարձրացնելով ու ցածրացնելով ձայնը, ողտվելով նրա հնչյունների ամբողջ գումարից։ Ինտոնացիան հնչյունային նկար և, վորը դրսերում է խոսքի իմաստային նշանակությունը։ Ինտոնացիան հարստացնում է մեր խոսքը, տալով նրան մտքի բաղմապիսի յերանդներ։ Մենք կարող ենք ինտոնացիայի միջոցով միևնույն բառին կամ Փըրաղին տարրեր բնույթ տալ։ Որինակ՝ «Բարե» բառը կարելի յէ արտասանել ուրախ, սիրալիր կամ թէ՝ անտարբեր, չոր ու ցամաք, հպարտությամբ և այլն։ Կարելի յէ «Բա՛ց դուռը» կարճ, ֆրաղն արտասանել վորպես ինդիր, սպառնալիք, զարմանք և այլն։ Ինտոնացիան պետք է համապատասխանի մտքին, պատմողը պետք է ողտագործի իր ձայնի ամբողջ կարողությունը ճիշտ ու համոզեցուցիչ ինտոնացիա զործադրելու համար։ Այս պես որինակ՝ «Բոքոնիկ» հեքիաթում պատմողը հեքիաթի ընդհանուր ուրախ տոնի Փոնի վրա կարող է ինտոնացիայի միջոցով տալ բոքոնիկին հանդիպող ամեն մի դաղանի պատկերը այդ թվում նաև խորամանկ աղփեսի, վորն աշխատում է բոքոնիկին համոզել, վոր նա ցատկի իր դնչի վրա։

Պատմվածքի մեջ տրամաբանական շեշտերը ողնում են ճիշտ արտահայտել բովանդակությունը, ճիշտ հասկանալ առանձին նախադասությունները։ Զե՞ վոր նախադասությունն արտասա-

նելիս բոլոր բառերը միատեսակ չեն շեշտվում։ Յուրաքանչյուր դարձվածք ունի իր շեշտված բառը, վորը և նրան աալիս և վարուշ իմաստ։ Որինակ՝ «Դաշտում ձիու դլուի և ընկած» նախադասության մեջ շեշտը դրված է «ուլուխ» բառի վրա, վորով-հետեւ տվյալ դեպքում խոսքը հենց դլիսի մասին է։ Յեթե վորձնենք դլուի բառի փոխարեն մյուս բառերը շեշտել, նախադասության իմաստը կփոխվի՝ «ընկած և» բառի շեշտումը կհաստատի դլիսի վիճակը մոմենտին, «դաշտում» բառի շեշտումը կվկայի, վոր դլուին ընկած է դաշտում և վոչ թե անտառում, այդում կամ մի այլ տեղ և այլն։ Պատմողը պետք է շեշտի այն բառը, վորը նախադասությունը տալիս և ոլահանձված կմասան ու նշանակությունը։ Բառի անձիւտ շեշտադրումը փոխում է դարձվածքի իմաստը։ Այսպես՝ Պուշկինի «Վոսիւ ձկնիկը» կարդալիս հաճախ

«Յերկրորդ անդամը ցանցը ձգեց ծով»,

Ցանցը դուրս յեկավ ծովային խոտով».

յերկտողում շեշտը զնում են «ցանցը» բառի վրա, վորը, իհարկե, սխալ և բոլորովին այլ կերպ են հնչում այդ տողերը, յերբ շեշտը դրվում է ճիշտ, այսինքն «յերկրորդ» բառի վրա։

Ձայնի ուժը՝ ուժեղ, մեղմ, նույնպես ունի իր արտահայտչությունը։ Այստեղ ել հարկավոր են և՝ բաղմապանություն, և՝ չափավորություն։ Յերեմին պատմողը պատմվածքի բարձր լարման միջոցին ձայնը չափազանց բարձրացնում է և համարյա ճշոցով է արտասանում այդ տեղը։ Սուր ճշոցներն ականչ են ծակում, կեղծ են հնչում, խանդարում են հանդիսատ լուկ, իսկ յերեխաներին կարող են նաև վախեցնել։ Բանը ձայնի բարձրությունը չե, յերբ հարկավոր է տալ ամենաուժեղ, լարման մուժենաը, այլ՝ պատմողի իրեն ապրումները, պատմողը նման տեղերը կարող է շատ ավելի ընդդեմ ցածր ձայնով, իսկ յերեմին նաև՝ չշնջունով։ Սակայն մոնուան պատմումը ձանձրալի յէ և հոգնեցուցիչ։

Խոսքի տեմպը (արագացումը կամ դանդաղեցումը) պատմելու ժամանակ խոշոր նշանակություն ունի։ Պատմելու ընդհանուր տեմպը, մանավանդ յերեխաների համար, չպետք է արագ լինի։ Պատմելիս չպետք է շտապել։ Պատմվածքի ուկնդրումը հանդիսատ ժամանց չե, այլ՝ ուշադրության լարված կենարունացում և յերեակայության աշխատանք պահանջող ակտիվ պրոցես։

Անհրաժեշտ է յերեխային հնարավորություն տալ հետեւուղառմվածքի բովանդակությանը:

Այսուամենայնիվ, հիմնական, վոչ արագ տեմպի Փոնի վրա՝ անհրաժեշտ է պատմելու ընթացքում տեմպի համապատասխան բաղմազանություն մտցնել: Որինակ՝ պառավ տատի քայլվածքը պետք և վոչ թե արագ տեմպով պատմել, այլ՝ դանդաղ, վորըն իր հերթին չի համապատասխանի սլաշող գնացքի ընթացքն արտահայտելու համար: Պատմելու տեմպը նույնպես արտահայտիչ մի միջոց է, վորը պետք և ողտագործել պատմվածքին ավելի պատմերավորություն, արտահայտչություն տալու համար:

Բացի այդ, պատմելու ընթացքում պետք է ողտագործել նաև պառազաները, դադարները: Դադար լինում և նախադասության վերջում, վերջակետից հետո և նախադասության միջում: Պատմելիս նախադասության վերջում անսպայման դանդաղ պետք է լինի. նա մեկ միտքը բաժանում է մյուսից, նա յերեխն սահմանագծում է յերկու պատմերներ: Յերբ պատմողը խոսում և առանց անհրաժեշտ դադարների, «մոռանց ստորակետերի ու վերջակետերի», ապա վոչ միայն յերեխան, այլև մեծերն են դժվարանում հետեւել նրան:

Յերբ դադարը արվում է վոչ թե նախադասության վերջում, այլ միջում, ապա դրանով սովորաբար արտահայտվում: Ե հուղական բարձր լարման մոմենտ: Նախադասության մեջ ընկնող դադարը լսողի ուշադրությունը բեվեռում է պատմվածքի տըվյալ տեղի վրա: Որինակ՝ «Յերեխաները բաց արին ցախանոցի դուռը, իսկ այնտեղ (դադար) իրենց Փուչկան եր»: Նախադասության միջում դադարը հագեցված է լինում պատմերով. այստեղ կարեռն այն է, վոր դադարը վորոշ, հարկավոր տեվողություն ունենա՞չ չատ յերկար չակե, վորովհետեւ դա ջպայնում է լսողին, կարճ ել չլինի, այլապես կթուլացնի լարումը:

Շարժումներն ու միմիկան նույնպես նշանակություն ունեն. Պատմելիս պետք չե տալ դեմքի ճշգրիտ արտահայտությունները և ուժեղ շարժումներ կատարել, մանավանդ, յերբ ունկնդրում են նախադարոցական հասակի յերեխաները: Շարժումները կուրավեն յերեխաների ուշադրությունը և կիսանգարեն հետեւել պատրմվածքին ու հասկանալ նրա բովանդակությունը:

Մյուս կողմից՝ քարացած, անշարժ դեմքով, լարված, անշարժ դիրքով պատմողը, վորը վախենում է դլուխը թեքել, թե շարժում կատարել, նույնպես իջեցնում է պատմվածքի

արտահայտչությունը: Յերբեմն պատմողի դեմքին լինում է մի-սրինակ, քարացած արտահայտություն: Յերկարաժե, մի տեսակ քարացած ժայիտն անբնական է և ձանձրալի: Նման միուրինակ միմիկայի դեմ պետք է պայքարել: Պատմողի դեպի նյութըն ունեցած հետաքրքրությունը և այդ նյութը յերեխաներին պատմելու ցանկությունը պետք է արտահայտվի նրա բնական, կենդանի դեմքի վրա:

Խոսելով պատմելու տեխնիկայի մասին, չպետք է մոռանալ կանոնավոր դիմիկայի, բառերը ճիշտ արտասանելու պահանջը: Հաճախ դաստիարակի լեզուն տառապում է անփութության, անհոգության արդյունք հանդիսացող մի շարք պակասություններով՝ բառերի վոչ հստակ, վոչ դրական՝ արտասանում, առանձին հնչյունների, բառերի վերջավորությունների սղում և այլն: Գեղարվեստական պատմումի ժամանակ դաստիարակի խոսքը պետք է լինի պարզ, հստակ ճիշտ ու դրական՝ արտահայտության համապատասխան:

Յերեխաներին պատմելու տեխնիկան վորոշ չափով տարբերվում է մեծերին պատմելու տեխնիկայից: Նա ավելի պարզ և ազգությունների նրբությունները տալու և ինտոնացիայի տեսակետից: Այսպես որինակ՝ բավական ե «Բոքոնիկ», բոքոնիկ, յեսքեղ կուտեմ» խոսքերը մի փոքր կոպիտ ճայնով՝ արտասանել՝ արջի ասածը պատմերացնելու համար կամ նույնը ալելի բարակ, անլուստահ ճայնով արտասանել՝ նապաստակի ասածն արտահայտելու համար:

Նախադարոցական հասակի յերեխաներին պատմելու տեխնիկայի մեջ ել վորոշ տարբերություն կա: Փոքրերը պատմերներն ըմբռնում են ավելի ընդհանուր դեկրով. այդ պատմառով անհրաժեշտ է նրանց տալ պատմերների գլխավոր, հիմնական հատկանիշները և ճիշտ տալ այդպիսիք: Այս ինդրում մեծ դեր կարող է կատարել ճայների նմանեցումը՝ կովը պետք և բառաչի, չունը՝ հաջի, չոգեմեքնան՝ կնչացնի և այլն:

Այստեղ նշանակություն ունեն նաև պատմողի շարժումները: Պատմողը ձեռքերով կարող է ցույց տալ, թե արջունի ինչպիսի դույլով ջրի վնաց, ինչպիսի շաղգամ աճեց և այլն: Իհարկե, չպետք է տարմել շարժումներով:

Մանկապատեղի բարձր խմբի յերեխաներն արդեն կարող են արտահայտման ավելի բարդ ձևեր ըմբռնել: Այսպես՝ «Աղվեսն

ու այծը» հեքիաթում այծի հարցին՝ «Իսկ ինչպիսի՞ ջուր է», աղվեսը պատասխանում են՝ «Շատ լավ»: Ինտոնացիայի նրբությամբ կարելի յեւ տալ աղվեսի խորամանկությունը, վորը ցանկանում եր այծին գայթակղել և տանել դեպի ջրհորը: Փռքքերի համար սա անհասկանալի կլինի:

Պատմելու տեխնիկական պրիորները յուրացվում են՝ աստիճանաբար: Անկասկած, տեխնիկային տիրապետելը դաստիարակից պահանջում ե վորոշ կուլտուրա և ավյալ բնագավառում աշխատելու ցանկություն: Լավագույնն այն ե, վոր պատմելն ըսկըսվի հեքիաթից՝ ամենակարճ հեքիաթում անդամ դաստիարակը չափազանց հարուստ՝ նյութ կտնի արտահայտիչ ինտոնացիայի, արամաբանական շեշտի, դադարների և այլ վարժությունների համար:

Պատմելու արվեստը մատչելի յեւ դաստիարակին ու անհրաժեշտ նրա համար: Պատմելու առաջին անհաջող փորձերը չըպետք ե հիսութափեցնեն դաստիարակին և անվաստահություն ներչնչեն դեպի իր ուժերը: Վորոշանք գործադրելով դաստիարակը լիովին կտիրապետի պատմելու արվեստի տեխնիկային և կարող ե իր դաստիարակչական աշխատանքի պրոցեսում ուղաղործել նաև դեղարվեստական պատմումը:

IV ՊԱՏՄՈՂԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Պատմողը յերեխաների հետ կատարած իր աշխատանքի ընթացքում վոչ միայն նրանց հազորդում ե ուրիշների պատմվածքները, այլև անհրաժեշտաբար իր պատմվածքներն ե հորինում:

Վորոշ չափով ստեղծագործություն պետք ե համարել և ուրիշի պատմվածքի մեջ փոփոխություններ կատարելը՝ ավելացնելը, պակասեցնելը:

Պատմվածքի կրծատումը յերկու տեսակ ե կատարվում՝ յերեմն համեմատաբար ծավալուն յերկի միայն մի հատվածն ենք վերցնում և նույնությամբ հաղորդում յերեխաներին, յերեմն ել յերկից զուրս ենք ձգում առանձին եպիգրաֆներ, յերեխաների համար գժվար ըմբռնելի տեղերը, ձգձգված մասերը:

Ներկասովի «Մազայ պապն ու նապաստակները» գրվածքից մենք կարող ենք վերցնել այն մասը, վորոշեղ նկարագրվում ե, թե ինչպես ե Մազայն ազատում նապաստակներին:

Գարենի «Տյոմայի մանկությունը» վեպից, վորը, իհարկե, ամենեին մանկական գրվածք չե, կարող ենք վերցնել «Տյոման ու ժուչկան» հիանալի հատվածը և տալ յերեխաներնին իբրև մի ամբողջություն:

Այլ ե կրծատման մյուս ձևը: Շատ մեծ պատմվածքը հնարավոր չե բանավոր տալ յերեխաներին մեկ անդամից: Որինակ՝ Բիանկիի «Անտառի տնակներ» ուղատմվածքից կարելի յեւ տալ անտառի նկարագրությունը և այն թուշուներն ու նրանց բները, վորոնց ծանոթ են յերեխաները, գուրս ձգելով մյուս եպիգրաֆները:

Յերեմն պարզեցման նպատակով մենք կրծատում ենք ավելորդ մանրամասնությունները և յերկրորդական նշանակություն ունեցող գործող անձերին:

Դուրս ենք ձգում նաև՝ կոպիտ, գժվարը մբռնելի, անհա-

մապատասխան կտորները։ Գրվածքի վերամշակումը կարող է և ավելի հեռուն դնալ։

Ընդհակառակը, պատահում են դեպքեր, յերբ հարկ է լինում տեքստը լրացնել՝ պատմվածքի առանձին մոմենտների ավելի ընդարձակ նկարագրի տալ։ Այսպես որինակ, յերբ պատմում ենք աշխատանքի հերոսների մասին, թերթից վերցրած վորեւ դեպքի մասին, մեզ հայտնի յեն լինում միայն կենսադրական սխեմատիկ տվյալներ կամ տվյալ գործողության լոկ փաստը։ Մեզ ե մնում պատկերել այն ուեալ ըրջադրությունը, վորի առկայությամբ կարող եր կատարվել այդ գործողությունը։

Անկասկած, գրվածքն ընդարձակելն ավելի դժվար է, քան կրծատելը։ Դրա համար անհրաժեշտ է ունենալ ստեղծագործական յերեսակայություն։ Ընդհարձակումն արդեն ստեղծագործության մի տեսակն է։

Գրվածքի ամեն մի փոփոխում պետք է կատարել մեծ դգուշությամբ ու չորհրով, վորպեսզի վոչ միայն չաղճատվի գրվածքի իմաստը, այլև՝ բնույթը։ Անգամ բնադրի լեզուն հնարավոր չափով պետք է պահպանել։

Հաճախ պատմվածքներն այնպես են փոփոխվում, վոր բարդությունների հետ միասին բավական չափով վերանում են նաև նրանց պատկերավորությունը, գեղարվեստականությունը, խորությունը։ Նման դեպքերում ավելի լավ է այդ պատմվածքները չիջեցնել մինչև յերեխայի ըմբռման աստիճանը, ավելի լավ է սպասել, վոր յերեխան հասունանա և հասնի այն աստիճանին, վոր կարողանա լիովին հասկանալ այդ գրվածքները։

Այս կամ այն հեղինակի պատմվածքը վերամշակելուց բացի, լինում են դեպքեր, յերբ պատմողը բառի իսկական իմաստով ստեղծագործում է։ Դա տեղի յե ունենում և՝ փոքրիկների, և՝ նախադպրոցական հասակի մեծ յերեխանների հետ աշխատելիս։ Ի՞նչ պայմաններում ե անհրաժեշտ պատմողի ստեղծագործությունը, և դաստիարակն ինչպես պետք է մոտենա այդ ըստեղծագործությանը։

Պատմվածքը կարող է հյուսվել խաղի ժամանակ, կառուցում ների միջոցին, խորանարդների, տիկնիկների, խաղալիքների մտսին։ Խաղալիքների աշխարհը յերեխանների համար հարազատ ու կենդանի աշխարհ է։

Խաղալիք-կենդանիները գնում են ջուր խմելու, տիկնիկնե-

րը ցանկանում են ճանապարհորդել, նրանք թղթե նավակ են հստում (վորը տեղն ու տեղն է շնովում) և լողում գետի վրա, ապա շտապում են գնացքին համեմ գնացք է կառուցվում կամ արդեն պատրաստի գնացքն է ողտագործվում, գնացք, վորը թերեւ և առիթ է ավել տիկնիկներին ուղարկել ճանապարհորդելու։

Պատահում են բազմապիսի արկածներ, վորոնք տեղն ու տեղը ներկայացվում են։ Յերեխայի խմարովիդացիան, հանգատրաստից ստեղծագործումը որ որի վրա աճում, ընդարձակվում ու լրացվում ե նոր եղիգործներով։ Յերեմն յերեխան յերկարժամանակ ապրում է այդ խաղ-պատմվածքով։

Փոքր յերեխաններին հետաքրքրում են նույնպես փոքրերին վերաբերող պատմվածքները՝ կապված առորյա կյանքից և յերեխաններից իրենցից ստացած տպավորությունների հետ։ Պատմությամար այստեղ ստեղծագործության հարուստ աղբյուր կա։

Դաստիարակի ստեղծագործական պատմումի համար վորտեսթեմա կարող է ծառայել նաև խմբի կյանքը՝ վոզնի գտնելը, նավով ճամբորդելը, այցում, բանջարանոցում կատարվող աճենորյա աշխատանքը և այլն։

Յերջերս դաստիարակներն սկսել են դիտակցել յերեխանների կյանքի վերաբերյալ պատմելու անհրաժեշտությունը։ Յանկապահների վերաբերյալ պատմվածքներից լավագույնները գրի առնվեն։ Ու յե, վոր նման պատմվածքներից լավագույնները գրի առնվեն։

Յերեխայի կյանքից վերցրած պատմվածքները, անհատ յերեխան կամ յերեխանների խմբի համար հորինված պատմվածքները պահանջում են առավելապես դիտունակություն։ այդ պատմվածքները պետք է շարադրվեն յերեխաններին հասկանալի պարզ ու պատկերավոր լեզվով։

Անցնենք մեծ յերեխաններին (7-8 տարեկան) համապատասխան ստեղծագործության։ Այս կարգի շատ պատմվածքներ վերաբերում են մեր հասարակական կյանքում տեղի ունեցող դեպքերին և ստեղծագործվում են այդ անցքերի ազդեցությամբ՝ տեղի յեն ունենում դեպքեր, վորոնք բոլորին հուզում են, վորոնց մասին յերեխանները լսում, են հասակավորներից և պահանջում ծանոթացնել իրենց։ Այդպիսի հաջող թեմաներից ելին՝ «Ստալինյան մարզուտ»-ը, «Կրասինի արշավը», «Զելյուսկինյան դիտարշավը», «Պապանինականների գիտարշավը» և այլն։

Հետաքրքրվող, զգայուն դաստիարակը, իհարկե, չի սպասի, չոր լույս տեսնի այդ թեմայի վերաբերյալ համապատասխան պատմվածք, վորից ողտովելով զրույց ունենա յերեխաների հետ: Բնականորեն նա ամէշաժեշտություն կզա, թերթերից, զրքերից, ականատեսներից նյութեր հավաքել, մշակել և մատչելի ձևով տալ յերեխաներին:

Նման աշխատանքը սկահանջում և վորոշ պատրաստություն և ստեղծագործական ընդունակություն:

Նման պատմվծքի նպատակը վո՞չ այնքան յերեխաներին վորաշ տեղեկություններ հաղորդելն ե, վորքան տեղի ունեցած հերօսական փաստերի առթիվ յերեխաների մեջ հետաքրքրություն, համապատասխան ապրումներ առաջացնելը և, յերբեմն ել՝ նաև այդ փաստերի դիտակցումը:

Ինչպիսի՞ պահանջներ ենք առաջազդրում մենք նման պատմվածքներին: Առաջին պահանջ՝ պատմվածքը պետք ե լինի ճըշմարտացի, այսինքն իրականության համապատասխան: Վորոշ պարզեցում կարելի յե, սակայն փաստերի աղավազում՝ յերերք:

Յերկրորդ պահանջ՝ պատմվածքը պետք ե համապատասխանի յերեխաների տարիքին՝ հասկանալի լինի թե բովանդակություն, թե լեզվի տեսակետից:

Պատմողը նյութ ե հավաքում թերթերից, զրքերից, ականատեսներից, մի խոսքով՝ ամեն տեղից, վորտեղից կարող ե: Պատմողն իր թեմայի մասին ավելի պետք ե իմանա, քան հաղորդելու յե յերեխաներին: Դա մի կողմից անհրաժեշտ ե, վորնա կարողանա պատասխանել յերեխաների հարցերին, մյուս կողմից՝ վորպեսզի հենց պատմվածքը նյութով հագեցված լինի:

Պատմողը մի կողմ թողնելով ուշագրությունը ցրող մանրամասությունները, կենտրոնանում ե հիմնական դեմքերի և գործողությունների վրա:

Սակայն այստեղ մի վտանգ ե առաջանում, այդ այն ե, վոր ամեն պարզեցում իր սահմանն ունի, վոչ ամեն մի թեմա կարելի յե պարզեցնել և վոչ՝ ցանկացած չափով: Այնպես պետք ե անել, վոր խնդրի եյությունը պարզեցումից չտուժի:

Վորոշ թեմաների ըմբռնման համար պահանջվում ե համապատասխան պատրաստություն և, յեթե առողջարիխն այդ չունի, այդ դեպքում ավելի լավ ե հետաձգել նման դժվար թեմաները: Ճիշտ այնպես, ինչպես մենք յերեխաների վորությունը պատկերավոր կամաց աղավագությունը:

Կան վորոշ յերկեր յերեխաներին ծանոթացնելու համար հետաձգում ենք, մինչեւ այն ժամանակ, յերբ նրանք ի վիճակի կլինեն լիսպին ողտովել նրանցից, այնպես ել կարող են լինել թեմաներ, վորոնց չի կարելի ծանոթացնել նախաղպրոցականներին՝ այդ թեմաների բարդության պատճառով:

Թեման յերեխայի հետաքրքրությանը և ըմբռնմանը մոտեցնելու համար մենք առանձնացնում ու լնդգծում ենք նրա կոնկրետ կողմը, յերեխային տալով վոչ թե չոր ու ցամաք դատողություններ, այլ մատչելի պատկերներ: Գետք և յերեխաների ուրած առարկաններն ու մոմենտները նկարագրել պատկերավոր ձևով:

Յեթե հնարավոր ե և դրա համար կան սկահանջված տարրերը, ապա աշխատում ենք տալ իսկական պատմվածք՝ դրական ստեղծագործության բոլոր «կանոնների» համեմատ: Հերոս, հանդույց, շահերի բաղվում, շարժում, զարգացող գործողություն, զարգացման բարձրագույն կետ, վորին ձգտում ու վորի մեջ հանդուցվում են բոլոր թերերը, և լուծում: Առաջ ընթացող այս ամբողջ կյանքը առողջարիխային գնում և սպասողական վիճակում, թե ի՞նչ ե լինելու հետաղայում, ինչպես կըլուծվի ստեղծված դրությունը:

Սա յերեխաների համար ստեղծում և սպասողական լարված վիճակ և բուռն հետաքրքրություն:

Պատմելու հետ կազմված ստեղծագործական աշխատանքը պատասխանատու գործ ե, և անփութությունն այստեղ անհանդությելի յե: Մեր նախաղպրոցական պատկերիկայում յերեմն կարելի յե հանդիպել տնայնագործության որինակների: Ինչպես պետք ե խուսափել դրանցից: Դրա համար կա միայն մեկ ճանապարհ՝ մշակել սեփական լեզուն, գարձնելայն կոնկրետ ու պատկերավոր: Այդ տեսակետից առանձնապես արժեքավոր ե ծանոթությունը Փոլկլորին, ժողովրդական հեքիաթին և ինչպես կլասիկների, այնպես ել ժամանակակից լավագույն գրողների յերերին: Անհրաժեշտ ե խորն ուսումնասիրել այդ գրվածքների կառուցվածքը, հաշվի առնել նրանց լեզվի պատկերավոր միջոցները, պատկերների հարստությունը: Սեփական լեզուն մշակելու այդ ճանապարհն ե, վոր լիարժեք կդարձնի պատմողի ստեղծագործությունը:

ՌԱԴԻՌԱՏՄՈՒԽ

Նախաղպրոցական հասակի յերեխաների համար ռադիոհազորդումներն առանձնահատուկ նշանակություն ունեն և յուրատեսակ ազգեցություն են ունենում նրանց գեղարվեստական դաստիարակության վրա։ 5-7 տարեկան յերեխաներին ռադիոհազորդում տալու հիմք տարվա փորձից յենելով, կարելի յեհամովզած կերպով ասել, վոր գեղարվեստական նյութի հաղորդման այս ձեւն արժանի յեմեծագույն ուշադրության և դրական գնահատման։ Կատարելապես անհերքելի յեռադիոհազորդման խոր ազգեցությունը յերեխաների վրա չնորհիվ իր գեղարվեստական նյութի։ Առանձնապես կարեոր ե ընդգծել այն հանգամանքը, վոր ռադիոհարդորդումը լսում են միկրոնավոր յերեխաներ՝ ընտանիքներում, մանկական հիմնարկներում՝ բոլորը միաժամանակ յենթարկվելով ռադիոյի ազգեցության։ Նյութը հաջող ընտրելով, ռադիոհազորդման ծրագիրը չնորհքով կազմելով, մենք գեղարվեստական վառ տպավորություններ ստանալու հնարավորություն ենք տալիս նաև այն յերեխաներին, վորոնք բավականաչափ կուլտուրական, մանկավարժական ազգեցության տակ չեն գտնվում։ Մշտական գեղարվեստական ռադիոհազորդումները կարող են սիստեմատիկ ազգեցություն և լուրջ դաստիարակչական ներդրություն ունենալ յերեխաների վրա և միաժամանակ գեղարվեստական ստեղծագործական ապրումների մեջ հաճույք պատճառել նրանց։

Մեր դարաշրջանում, յերբ մեծագույն ուշադրություն և հոգատարություն կա դեպի յերեխան, անհրաժեշտ ե լայնորեն ոգտագործել գեղարվեստական գաստիարակության այնպիսի միջոց, վորպիսին ռադիոն ե։ Ռադիոպատմումն ունի նաև այն առանձնահատկությունը, վոր նա յերեխային տալիս ե լոելու կուլտուրա, դաստիարակում ե նրա ուշադրությունը։ Հաճախ յերեխայի ուշադրությունը ցրող տեսողական տպավորություն-

ների բացակայության և հօֆուստ ու բազմապիսի յերաժշտական նյութի առկայության պայմաններում (հնչյունական զանագան և ֆեկտուրի, յերաժտության զուգակցությամբ պատմում, վերջինի և յերաժտության հերթագործում և այլն)։ յերեխան լողական հարուստ տպավորություն և ստանում։ Իացի այդ, ռադիոհազորդման միջոցով հաճախ տրվում է վոչ թե մեկ առաջիր, գեղարվեստորեն ներգործող նյութի ամբողջ մի կոմպլեքս, ամբողջական սիստեմ։ Պետք են նշել նաև այն գամանքը, վոր ռադիոհազորդման ուկնուրությունը սովորեցնում է յերեխային կենտրոնանալ, հանդիսան ուշադրիր լոել՝ սա կարեւոր ու ոգտակար ունակություն է, վոր ձեռք ե բերում յերեխան։

Մանկապարտեզների պրակտիկայում նկատված է, վոր ռադիոհազորդումը մեծապես միավորում է յերեխաներին (կոլեկտիվ ունկնուրում), կազմակերպում ե նրանց, մշակում ե ինքնադիսցիպլինա, վորովհետեւ յուրաքանչյուր դիսցիպլինա իսխառող ջղայնացնում է մյուսներին, խանդարում ե լոել, և, ընդհակառակը, ապրումների ընդհանրությունը համախմբում է յերեխաներին, մտերմություն է ստեղծում նրանց մեջ և նրանց փոխհարաբերությունն ավելի կուլտուրական և դարձնում։

Կերծապես ռադիոհազորդման կապակցությամբ շատ կարեւոր դաստիարակչական մոմենտներից մեկն ել յերեխաների կապըն և ռադիոկենտրոնի հետ՝ յերեխաները պատասխանում են ռադիոկենտրոնի հարցերին, հաղորդումների մասին իրենց կարծիքն են հայտնում, ռադիոյի հետ կապված իրենց ստեղծագործությունները՝ նկարները և այլն ուղարկում են ռադիոկենտրոնին և նրանից պատասխաններ են ստանում։ Սա շատ կարեոր է յերեխայի մատահորիզոնի ընդհարձակման և նրա հասարակական դաստիարակության տեսակետից։ սա միաժամանակ յերեխայի ստեղծագործության համար խթան և հանդիսանում՝ յերեխան ռադիոհազորդումներն արտացոլում ե իր խաղերում, նկարչության, խոսքի ստեղծագործության մեջ և այլն։ Անկասկած է, վոր ռադիոն ստեղծագործելու տեսակետից ակտիվացնում է յերեխային։ Բագիսունկնդրությունից հետո յերեխաները գործողության միջոցով իրենց արտահայտելու՝ խաղալու, ստեղծագործությեն մի բան պատկերելու, ներկայացնելու սաստիկ

պահանջ են զգում՝ խաղի ու կերպարվեստի միջոցով արտահայտված մոտոռական ու տեսողական պրոցեսները մի տեսակ կոմպենսացիայի յեն յնթարկում դրանց բացակայությունը ուղղունենդրության լնթացքում։

Մոսելով նախադպրոցականի համար ուղղիունկնդրության նշանակության մասին, մենք կանգ չենք առնում յերեխայի մը՝ տառորիզոնի ընդարձակման, հուղական կուլտուրայի, հասարակական-քաղաքական դաստիարակության և այլ մոմենտների վրա, վորովհետեւ բոլոր այդ մամինաները վերաբերում են նաև պատմելու մյուս տեսակներին (դրանց թվում նաև ուղղիուպատմումին)։ Այստեղ մենք միայն ընդգծում ենք ուղիուհաղորդման յերեխայի վրա ունեցած առանձնահատուկ ազդեցությունը։ Մոսելովի մանկապարտեզների աշխատանքները ցույց են տվել, վորություններումը դրական մեծ ազդեցություն ունի յերեխաների լեզուն արտահայտիչ գարձնելու, ինտոնացիան հարստացնելու, խոսքի կառուցման և լեզվական ստեղծագործության վրա։ Սա չափազանց կարևոր է և արժեքավոր։ Այսպես, ուղիունկնդրությունից հետո յերեխաներն ստեղծել են լսած պատմվածքների, հեքիաթների, յերկերի բազմաթիվ վարիանտներ։ Յերեխայի վրա ունեցած ընդհանուր ազդեցունթյունից և նրա լեզվի ու ստեղծագործության վրա ունեցած ազդեցությունից բացի, դեղարվեստական ուղիուհաղորդումը դաստիարակին իրեն ել և մեծ ծառայություն մատուցում, վորպես պատմողի։ Հարստացնելով նրա լեզուն, դարձնելով այն ավելի արտահայտիչ, ավելի զեղարվեստական։ Բնորդանուր առմամբ՝ ուղիուհաղորդումը հարստացնում ու բարձրացնում է մանկապարտեզի կուլտուրան, առաջով նրան գեղարվեստական սիստեմատիկ նյութ (խոսք և յերաժշտություն), խոսքի լավագույն վարպետների, արտիստների և պատմողների կատարումով։

Ուղիոյի մեծ ծառայությունը նաև այն է, վոր նա անմիջապես արձականքում և ընթացիկ հասարակական յերեւություններին, մինչդեռ գիրքն այդ հնարավորությունից դուրի է։

Ուղիոաշխատանքի փորձը ցույց է տվել, վոր մեկ անձի ուղիուպատմումը նախադպրոցական յերեխաների համար ամենամատչելի և ամենադրամիչ ձեն եւ. այդ ձեի վրա ել առավելապես կանգ կառնենք։

Նախադպրոցականի համար նախատեսված ուղիուհաղորդման

ծրագրում, բայցի ամբողջական պատմումից, հաջողություն են դտնում նաև մի քանի առանձին նյութեր՝ փոքրիկ պատմվածք, յերգ, զվարճախոսություն, որախոսություն, հանելուկ միասին հաղորդելը։ Պատմվածքի և յերաժշտության կազմը, պատմվածք-քի ու յերաժշտության զուղակցումը կամ իրար հաջորդումը, իրեւ պատմվածքի հաջող լրացում, ոժանդակում և վեր հանել տվյալ նյութի եյությունը, նրա տրամադրությունը։ Ուղիոյով բավական հաջող և անցնում պատմվածքի ինսցենիբովկան, վոր կատարվում և մի քանի անձերի կողմից, և զեկավարը զբուցում է բազմամարդ աներեւոյթ առողիարիայի հետ, ոժանդակում և նրան լավ հասկանալու հաղորդումը՝ կապ հաստատելով առանձին գործող անձերի միջև, բացատրություններ տալով և այլն։ Պատմվածք — ինսցենիբովկայի մեջ գործող անձերի թիվը մեծ չպիտի լինի, այլապես նախադպրոցականների համար դժվար ըմբռնելի և հոգնեցուցիչ կլինի։

Ուղիոպատմումի հիմնական առանձնահատկությունը նրա յերաժշտական ճոխությունն եւ տեսողական տպավորությունների բացակայության պայմաններում նա պատմվածքի ցայտուն արտահայտման և դյուրըմբռնելի դարձնելու լավագույն միջոցն է։ Յերաժշտությունն իլյուստրացիայի յենթարկելով պատմվածքը, յերբեմն նրան ավելի յերաժտացնում, քան նկարը։ Պատմելու ընթացքում տրված յերգը հաճախ առանցքի կատարվում է, զատելով յերեխաների ուեկցիաների հետման վրա՝ հնարավորություն և տալիս յերեխաներին ըմբռնելու պատմվածքը նույնպիսի, իսկ յերբեմն նաև ավելի ուժով, քան յերբ նրանք անմիջական շփման մեջ են պատմողի հետ։

Հետաքրքրական է, վոր յերեխաները շատ հաճախ չեն նըրելատում պատմվածքին զուղակցող յերաժշտությունը, սակայն, բավական և նույն պատմվածքը տալ առանց յերաժշտության, վոր անմիջապես նկատեն նրա բացակայությունը։

Ուղիոյերաժշտության մեջ հիմնական տեղը բանում և յերգը։

Յերաժշտությունը հնարավորությունն է տալիս ստեղծելու խիստ արտահայտիչ եղիկական պատմեր։

Ուղիոպատմումն առանձին արվեստ է։ Միկրոֆոնի, անտեսանելի առողիարիայի առաջ պատմելն ազդում և պատմողի վրա, և հաճախ խոսքի մեծ վարպետն անզոր և զառնում միկ-

ըսովոնի առաջ՝ նա լիցք, վոգեչնում չի ստանում, առողիտորիայի հետ անմիջական կոնտակտի մեջ չլինելու հետևանքով: Նրա շարժումներն ազատ չեն (պետք և կանդնի միկրոֆոնի առաջ), նա առանձնապես պետք է ուշադրություն գարձնի իր ձայնի յնեւիների ու հնչունության վրա, վորովհետեւ միկրոֆոնը բյուլեզա պարզություն ու հնչունություն, հստակ արտահայտություն և հնչյունական նրությունների ճախություն և պահանջում: Միկրոֆոնի առաջ պատմողը պետք է իր խոսքը վերջացնի վարոշված ժամանակ, ուստադործելով միայն իրեն հատկացված բոպեները: Այս բոլորը մեծ դժվարություններ են ստեղծում պատմողի համար: Այդ պատմառով դեպքեր են լինում, վոր սովորական պարմաններում լավ պատմողը միկրոֆոնի առաջ անհաջողության և հանդիպում: Հաճախ ստացվում են այնպես, վոր սովորական պարմաններում լավ հնչող ձայնը ստուգում վատ և հնչում, և, ընդհակառակը, պակաս վորակյալ ձայնը՝ հիանալի յեւ հնչում: Միկրոֆոնն անի իր «բարբը», իր որենքները:

Վորովհետեւ ուղիոն միայն լուղական տպավորություն և թողնում, ուստի լեզվի խնդիրն այստեղ շատ ավելի սուր և զբուժում, քան սովորական ձեռվ պատմելու գեղքում, սակայն ստուգատմումից ստացված եֆեկտն ել հսկայական և, յեթե լեզուն վարպետության համապատասխան բարձրության վրա յեւ:

Յեթե սովորական պարմաններում պետք է խուսափել պատմավածքում յեղած նկարադրություններից ու յերկար տեղերից, ապա ուղիոհազրողման համար նախառեսլած պատմվածքում դա ևս առավել անհրաժեշտ է: Այդ պատմառով համարյա չկա մի պատմվածք, վորն առանց վորիստության կարելի լինի հաղորդել ուղիոյով, յեթե նա հատկապես ուղիոյի համար չեղած: Յերկախոսությունն առանձնապես լավ և հնչում ուղիոյով:

Մաղիոյով նախադպրոցականին պատմելու լավագույն նյութը ժողովրդական հեքիաթն է: Հենց հեքիաթի կառուցվածքը, վոր հաճախ փոխվում է յերգի, զործող անձերի պարզ բնութագրումները, հումորը, հեքիաթային պատկերավորության որիումները, դրության թեթեւ դրամատիզմը շատ հարմար են ուղիոհաղորդման համար և անմիջական ու կենդանի արձագանք են դանում յերեխաների կողմից:

Բաղիոյով մեծ մասամբ հաղորդվում են կենդանիներին վերաբերող հեքիաթները՝ «Կատուն, աքլորն ու աղվեսը», «Պուշկինը», «Աղվեսն ու արագիլը», «Պալատիկ» և այլն:

Մաղիոն շնորհել այն հսկայական ուշադրության, վոր նա մաղիոն շնորհել այն հսկայական ուշադրության վրա, զարձնում և խոսքի ինտոնացիայի և արտահայտչության վրա, հնարավորություն ավեց առանձնապես ընդգծելու հեքիաթի այն հողմերը, զորոնք կարդալու դեպքում ստվերի մեջ ելին մրկումը: Այսպես որինակ՝ «Կատուն, աքլորն ու աղվեսը» հեքիաթում ցայտուն կերպով ընդգծված և յերգիծական կողմը՝ կատարում ցայտուն կերպով ընդգծել խոսքի յերգի յեռակի կրկը վերաբերակցությունն աթորի հետ, կատվի յերգի յեռակի կրկը վերաբերակցությունն աթորի հետ և ամեն անդամ եւ ավելի աճող գրամատիզմով: «Պալատիկ» հեքիաթը պատմողին նաև հնարավորություն և տալիս պարզ միջոցներով ընդգծել խոսքի կրկնության ու աճման վրա զիջոցներով ընդգծել խոսքի կրկնության ու աճման վրա զիջումներով: Ժողովրդական հեքիաթները ուղղիոյով զվարձալի պրիունները: Հատկությունը համար յամակույն պատմվածքները կապես ուղիոյի համար հորինված լավագույն պատմվածքները կանք են, վորոնք իրենց ձեռվ ավելի մոտ են ժողովրդական նրանք են, վորոնք իրենց ձեռվ ավելի մոտ են ժողովրդական համարյա միջնորդների համար) և պատմողական ժամանակի մեջ յերեխաներ համար կապես ուղիոյի համար հորինված լավագույն պատմվածքները: Կենաչեքիաթին, որինակ՝ վորոնովայի «Հորթուկ» պատմվածքը: Կենաչեքիաթին մասին ժողովրդական հեքիաթներից բացի, ուղիոն դանիների մասին ժողովրդական հեքիաթներից բացի, ուղիոն ոգտագործում և նաև անհատական ստեղծագործության արտուղագործում հանդիսացող հիանալի հեքիաթները, որինակ, Անդերսենի հեքիաթները (նախադպրոցական հասակի մեջ յերեխաների համար) և պատմողական ժամանակի մանր ստեղծագործությունները (սրախոսություններ, զվարձախոսություններ), առաջնական հանդիսացող հեքիաթները (յերգեր): Սակայն Անդերսենի հեքիաթները ուղիով հաղորդելին անհամեմատ ավելի դժվար և, վորովհետեւ ոյով հաղորդելին անհամեմատ ավելի դժվար և, վորովհետեւ ուղարկելին անհրաժեշտ լինում կրծանաները բարդ են, հողերանական անհրաժեշտ և լինում կրծանաներ կատարել, իսկ կրծանաների Անդերսենի հեքիաթը և չաղձատել այն, շատ դժվար և:

Մանկապարտեղում ուղիունկնդրում անցկացնելու յեթողի կայի մասին լավ պետք է մտածի պատմաբարակը: Նա նախապես պետք և ծանոթ լինի ուղիոհազրողման մեկ ամսվա ծրագրին, վորպեսպի ուղիունկնդրումը զարձնի պլանային, սխառեմատիկ:

Փոքրերի հետ ուղիունկնդրում շղետք և անցկացնել: ՆԵՐԱԿԱ բմբոնման համար դա շատ բարդ խնդիր է՝ լսել աներեւանց բարձրությունների համար կամ կարելի յեւ ուղիությունը պատմողին: Հինգ տարեկանների հետ կարելի յեւ ուղիությունը սկսել, սակայն հաճախակի չպետք և կատարել և

շատ նոր հազորդումներ չտալ (ամսական 1-2)։ Այլ հազորդումները պետք ե կրկնվեն մի քանի անգամ։ 6-7 տարեկան յերեխաներին կարելի յե ամսական 3-4 նոր հազորդում տալ։ Նույն հազորդման կրկնումը մեծ բավականություն և պատճառում յերեխաներին։ Դա անհրաժեշտ և և նյութը յուրացնելու համար։ Մանկապարտեղում ռադիոունկնդրումը կարող և կապված լինել մի շաբթ մանկավարժական հասուլ առաջարկությունների հետ, որինակ՝ խոսքի զարգացման, խաղի, կերպարվեստի և այլն։ Մուկլայի Բառմանի ռայոնի № 43 և Ֆրունզեյի ռայոնի № 4 մանկապարտեղները ռադիոունկնդրումը կապելով յերեխաների խոսքի զարգացման, մասնավորապես պատմելու և նյութի այլ ձևով վերաբարեղության հետ, չափազանց հետաքրքրական ու հարուստ արդյունքների յեն հասել։ Ռադիոպատմումները, զոր սկզբում վորոշ լարում եյին պահանջում, հետագայում միանդամայն սովորական դարձան և յերեխաների ստեղծադարձության համար հարուստ աղբյուր հանդիսացան՝ յերեխաները սիրով ու հաջողությամբ վերապատմում եյին լսած հազորդումները, նրբուն վերաբարեղելով ինտոնացիան, անդիք եյին անում լսած յերգերը, պատմվածքներից զանազան վարիանուններ եյին ստեղծում և այլն։ Յերեխաները, լսելով ռադիոհաղորդումը, վորոշում եյին, թե ի՞նչ զործիք են նվազում, վորոշում եյին յերաժշտության բնույթը, ճանաչում եյին արտիստներին, տեքստի հետ կապված սովորում եյին մելոդիան և այլն։

Լավ է, յերբ մանկապարտեղը կապված և ռադիոկոմիտեյի կամ ռադիոհանդույցի հետ ցանկալի յետարին 2-3 անգամ մանկապարտեղ հրավիրել այն արտիստներին ու յերաժիշտներին, վորոնք ռադիոհաղորդումներ են կատարում։ Սա շատ կարևոր ե յերեխաների համար՝ նրանք կառվորեն ռադիոհաղորդումների յետեռում տեսնել կենդանի մարդկանց։

Ամենից դժվարը ռադիոունկնդրման սկիզբն է։ Յերեխաները բարձրախոսի կամ ռադիոընդունիչի առաջ լսում են հազորդումը, իսկ պատմողը, կենդանի մարդը չի յերեռում, նա չկա։ յերեխաների համար դա մեծ դժվարություն և ներկայացնումն չկա մի բան, վորի վրա նրանք իրենց տեսողությունը կենտրոնացնեն։ Լավն այն է, վոր հազորդումից առաջ յերեխաներին բարձրախոսի կամ ռադիոընդունիչի առջե կիսաշրջանաձև նըս-

տեցնելով, առվի. «Յերեխաների, այժմ մենք կլսենք (յենթադարձների) «Ծիտիկի» մասին»։

Ինչպես սովորական պատմումի ժամանակ, այստեղ ել յերեխաներին չպետք ե ճնշել և «սուս, մի՛ խոսեք, մի՛ դուաք» և այլ պահանջներ չպետք ե անել։ Չպետք ե արգելել յերեխաների բացականըությունները, ուեպլիկաները։ Նույնպես չպետք ե խանգարել յերեխաներին, յերբ նրանք, ինչպես այդ սովորաբար տեղի յե ունենում ռադիոունկնդրության ժամանակ, ձայնակցում են հազորդման, նրա սիթմով ծափ են տալիս և այլն։ Չիսանգարել նաև ռադիոյով տրված հարցերին պատասխանել։ Ռադիոպատմումը համար սկսվում կամ վերջանում է յերեխաներին ուղղված հարցերով։ Վորոշ գաստիարակներ կտրում են ռադիոհաղումանը պատասխանող յերեխաների խոսքը՝ այդ ևս սխալ է։

Իհարկե, ռադիոանկյունը պետք ե անաղմուկ սենյակում լինել։

Հազորդումը լսում են 15-20 րոպե։ Կես ժամը հոգնեցուցիչ է, մանավանդ նոր ունկնդրել սովորողների համար։ Կես ժամ ակնող հազորդման ունկնդրությունը հանդուրժելի յե բացառիկ դեպքերում։ Նման դեպքերում անպայման պետք ե համապատասխանող կարգավորել յերեխաների մնացած աշխատանքները։

Ռադիոկոմիտեյի և ռադիոհանդույցների մշտական կապը փոքրիկ ռադիոունկնդրների հետ, յերեխաներից ստացած հսկայական քանակությամբ նամակներն ու նկարները, մանկալարժների հետ ունեցած կենդանի կապն ու նրանցից ստացած նյութերը՝ ռադիոունկնդրության վերաբերյալ իրենց կատարած աշխատանքների մասին— այս բոլորը հնարավորություն են տալիս վորոշ յեղակացություններ անել յերեխաների համար ռադիոպատմումը հսկայական նշանակության մասին։

Այս կապակցությամբ անհրաժեշտ և ե՛լ ավելի ինամքով կազմել նախադպրոցական հասակի յերեխաների համար տըրվելիք ռադիոհաղորդումների ծրագրերը, ուշադիր ու խնամքով ստուգել նրանց ազգեցությունը յերեխաների վրա, հաշվի առնել յերեխաների կարծիքները, վոքրիկ ռադիոունկնդրների ուռումնասիրությունն ավելի սիստեմատիկ դարձնել ու ավելի դիտական հիմունքներով կատարել։

ԱՐԺԻԾ

ԲՈՎԱՆԴԱԿԱԿՑՈՒՆ

Ե՞՞

1. Պատմելը մանկապարտեղում Յե. Ֆլյորին.	3
2. Պատմելու մեթոդիկան Ն. Կարպինսկայա	18
3. Պատմելու տեխնիկան Մ. Բոգոլյուբսկայա	30
4. Պատմողի ստեղծագործությունը Յե. Շարադ.	43
5. Բաղիոպատմում Վ. Ֆեդիաևսկայա	48

Գառ. Խմբադիր՝ Փ. Պողոսյան

Տեխ. Խմբադիր՝ Ի. Վարդանյան

Սրբագրիչ՝ Գ. Հակոբյան

Կոնտրու. սրբ.՝ Շ. Գարագան

Գրավություն լիազոր՝ Բ—1034. Հրատ. 5001.

Գումարելք 688. Տիքառ 2500.

Հանձնված է արտադրության 9 ողուսա. 1939 թ.

Ստորագրված է ապագրության համար 29 հունվ. 1940 թ.

Հայոց Առաքական Խորհրդական Աստվածական Եկեղեց, Եկեղեց, 65

ՀԱՅՈՅԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ
ԱՍՏՎԱՅԻ ԵԿԵՂԵՑ

ՀՀ Ազգային գրադարան



NL0226071

50.963

ԳԻԱԸ 1 Ր.

50

Рассказывание
в детсаду

Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.